

ՄԱՆԿԱԿԱՐԺԱՐՈՒԹՅԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Մեթոդական ուղեցույց



Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



Empowered lives.
Resilient nations.



**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ



Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումն աջակցության կենտրոններում:
Ձեռնարկ: Երևան, 86 էջ:

«Մարդու Իրավունքների Խթանում և Պաշտպանություն» ծրագիր

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները պատկանում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի տեսակետների հետ:

Հեղինակներ՝

Հայկուհի Ադամյանը

Լիանա Մարգարյանը

Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՄԱՍ 1	
Ընդհանուր ցուցումներ Մանկավարժահոգեբանական հետազոտություն անցկացնելու վերաբերյալ	6
ՄԱՍ 2	
Մանկավարժահոգեբանական հետազոտության գործընթացում կիրառվող գործնական նյութերն ու մեթոդիկաները	16
ՄԱՍ 3	
Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումը աջակցության կենտրոնում. Առաջարկվող փաստաթղթային փաթեթ	66
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	84

ՆԱԽԱԲԱՆ

Մենք ուզում ենք, որ մեր երկրում
բոլոր երեխաների համար բաց լինեն բոլոր կառույցների **դռները**, և
որ նրանք, իրենց ծնողների **ջերմությամբ ու աջակցությամբ** շրջա-
պատված, վստահորեն փնտրեն, գտնեն ու ապահովեն իրենց տեղն ու
դերը **հասարակության մեջ**:

Մարդիկ տարբեր են. դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցան-
կացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ: Երեխաները
ևս տարբեր են, և կրթության մեջ նրանց դժվարությունները կարող
են նույնպես շատ տարբեր լինել: Օրինակ, նրանք կարող են դժվարու-
թյուններ ունենալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս, շրջա-
պատող մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի համար նրանց պետք է
օգնել՝ լրացուցիչ աջակցելով:

Որոշ երեխաների համար այդ խնդիրները ժամանակավոր դժվա-
րություններ են, մինչդեռ մյուսների համար դրանք կարող են լինել եր-
կարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող
խնդիրներ:

Հայաստանում «Կրթության մասին»¹ Հայաստանի Հանրապետու-
թյան 1999 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը սկիզբ դրեց
հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ու ներառական
կրթության հիմնադրման, որի հիմքում յուրաքանչյուր երեխայի կրթու-
թյան առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն է, կրթու-
թյան կազմակերպումն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսաց-
նելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության
խրախուսման սկզբունքների ապահովումը: Ներառական կրթությունը
կարևոր քայլ էր հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրների
լուծման ուղղությամբ:

Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգում ևս Հա-
յաստանն անցել է բարեփոխումների մի քանի փուլ՝ ստեղծելով երե-

1 «Կրթության մասին», ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 6:

խայի և ընտանիքի աջակցության ցանց, որով նպատակ ունի զարգացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգը՝ նկատի ունենալով, որ այն լիարժեքորեն պետք է ապահովի նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների բազմազան կարիքների բավարարումը՝ կանխարգելելու համար նմանատիպ երեխաների հայտնվելը երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում²: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է ճիշտ ժամանակին բացահայտել երեխաներին, որոնք ունեն մասնագիտական աջակցության կարիք, ինչը կարող է նրանց տրամադրվել համապատասխան հաստատություններում:

Մանկավարժահոգեբանական բազմակողմանի և համապարփակ գնահատման ընթացքում սահմանվում են երեխայի զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև կրթության մեջ նրա հնարավորությունները: Կարևոր է բացահայտել նաև երեխայի սովորելու կարողությունների ձևավորվածությունը, ընդհանուր տեղեկացվածությունը, սոցիալ-կենցաղային կողմնորոշումը, շրջապատի մասին գիտելիքներն ու պատկերացումները, ճանաչողական գործընթացների ձևավորվածությունը, հուզականային, շարժողական ոլորտի առանձնահատկությունները (հատկապես մատների նուրբ շարժողականությունը), վարքի ադեկվատությունը: Այս տեղեկատվությունը շատ կարևոր է հետագայում երեխայի ուսուցման ձևի ընտրության և անհատական զարգացման ծրագրերի բովանդակության մշակման համար:

Սույն ձեռնարկի նպատակը երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների մասնագիտական զարգացման գործընթացին աջակցելն է: Ձեռնարկում ներկայացված նյութերը կօգնեն մասնագետներին հնարավորինս շուտ բացահայտել և աջակցել երեխաներին, որոնք ունեն կրթական և զարգացման ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների և անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք:

Ձեռնարկը բաղկացած է 3 մասից:

2 << Կառավարության 2014 թ. նոյեմբերի 13-ի No 1273-N որոշում

Առաջին մասում տրված են ընդհանուր ցուցումներ երեխայի մանկավարժահոգեբանական հետազոտություն իրականացնելու վերաբերյալ:

Երկրորդ մասում ներկայացված են մանկավարժահոգեբանական հետազոտության ընթացքում կիրառվող գործնական նյութեր և մեթոդիկաներ:

Երրորդ մասը պարունակում է մասնագիտական գնահատման և աջակցության տրամադրման համար անհրաժեշտ առաջարկվող փաստաթղթային փաթեթ, որը թույլ կտա գնահատման արդյունքների հիման վրա հեշտությամբ մշակել երեխայի հատուկ կարիքներին համապատասխան անհատական զարգացման ծրագիր:

Ձեռնարկի մշակման աշխատանքներն իրականացրել է օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախքան մանկավարժահոգեբանական հետազոտություն անցկացնելը՝ անհրաժեշտ է շատ ուշադիր ծանոթանալ երեխայի **բժշկական և կրթական փաստաթղթերի** հետ: Դրանք կարող են լինել բժիշկ-մասնագետների կողմից տրամադրված տվյալները երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության վերաբերյալ, զգայական համակարգի վիճակի, նյարդային համակարգի տիպի վերաբերյալ, ինչպես նաև կարևոր տեղեկություններ կրթական հաստատություններից՝ երեխայի վարքի առանձնահատկությունների, հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցման հմտությունների, նրա գործունեության արդյունքների վերաբերյալ՝ աշխատանքային տետրեր, նկարներ, ձեռքի աշխատանքներ և այլն [6]:

Ստացված տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս իրականացնել հետազոտություն՝ հաշվի առնելով երեխայի անհատական հնարավորություններն ու առանձնահատկությունները: Այսպես, օրի-

նակ, զարգացման մեջ արտահայտված խնդիրներ ունեցող երեխաներին, այդ թվում նաև կոնտակտի մեջ մտնելու դժվարություն ունեցողներին, նպատակահարմար է հետազոտել **խաղային նյութերի միջոցով**: Դրանք ճիշտ է կիրառել նաև խոսքի և լսողության խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներին հետազոտելիս: Կարևոր է, որ առաջարկված հանձնարարությունները նրանց կողմից ընկալվեն և կատարվեն առանց խոսքի և լարվածության նշանակալի ներգրավման:

Դպրոցահասակ երեխաներին, որոնք անընդհատ հետ մնալու պատճառով բացասաբար են վերաբերվում ուսումնական կոնկրետ առարկաներին, նպատակահարմար է տալ **առաջադրանքներ՝ հետաքրքրաշարժ, խաղային ձևաչափով**: Այն երեխաներին, որոնք շուտ են սպառվում և ծանձրանում, հետազոտելիս պետք է տալ այնպիսի առաջադրանքներ, որոնց միջոցով մաքսիմալ կարճ ժամկետներում կբացահայտվեն մեզ հետաքրքրող երեխայի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները:

Երեխայի ուսումնասիրությունն սկսվում է այն պահից, երբ նա մտնում է սենյակ, որտեղ իրականացվում է հետազոտությունը: Նրա արձագանքը նոր միջավայրին (հետաքրքրություն, անտարբերություն, վախ և այլն), ցանկությունը կամ չցանկանալը մտնել կոնտակտի մեջ, վարքի ադեկվատությունը վերլուծելը շատ կարևոր է վերջնական եզրակացություն անելու համար:

Անսովոր պայմաններում առաջացած լարվածությունը հանելու համար գործող ամենալավ միջոցներից մեկն **ազատ խաղն է**: Այդ խաղի ժամանակ երեխայի հետ հաստատվում է հետագա աշխատանքի համար անհրաժեշտ կոնտակտը: Միևնույն ժամանակ հետազոտողները ստանում են առաջին պատկերացումները երեխայի հոգեկանի, վարքի, մոտորիկայի առանձնահատկությունների վերաբերյալ: Այստեղ կարևոր է հետևել, թե ինչպիսի հուզական արձագանք է երեխան դրսևորում մեր կողմից առաջարկված խաղալիքին, այսինքն՝ հետևել այդ արձագանքի բնույթին: Երեխաների մի մասը խաղալիքները տեսնելիս բռնում արձագանք են դրսևորում, ոմանք էլ իրենց պահում են ավելի զուսպ: Որոշ երեխաներ միանգամից սկսում են խաղալ դուր եկած խա-

ղալիքներով: Երեխաների մի մասն էլ սահմանափակվում է բոլոր խաղալիքների վրայով անկանոն կերպով անցնելով կամ դրանք մի տեղից մյուս տեղը դնելով:

Անհրաժեշտ է հասկանալ՝ կայուն է արդյոք երեխայի հետաքրքրությունը խաղալիքների նկատմամբ, և ողջամիտ են արդյոք դրանց հետ իրականացվող գործողությունները: Հարկավոր է նաև ուշադրություն դարձնել նրան՝ արդյոք երեխան խաղը ուղեկցում է խոսքով կամ հարցերով դիմում է մեծահասակներին:

Երեխայի հետ կոնտակտի մեջ մտնելու, նրան տվյալ միջավայրին վարժվելու հնարավորություն տալու համար շատ արդյունավետ է պատկերավոր, ստեղծագործական գործունեությունը (նկարելու միջոցով պատկերելը): **Նկարելու գործընթացը** ավելի բնական է, երբ հետազոտողը «ձևացնում է», թե ինչ-որ գործով է զբաղված: Երեխային պետք է հնարավորություն տալ զգալու, որ նա կարծես թե ինքն իր հետ է գտնվում: Զրույցը երեխայի հետ կարելի է սկսել միայն այն բանից հետո, երբ երեխան իրեն ավելի հանգիստ է զգում և սկսում է հարցեր տալ: Սկսելով զրույցը՝ կարելի է հարցնել՝ ինչ է նա նկարում այդ պահին, ինչ գույնի մատիտ է օգտագործում դա անելու համար և այլն: Պետք է նշել՝ կարող է երեխան նկարել ինքնուրույն ընտրված թեմայով, և կայուն է արդյոք հետաքրքրությունը սկսած գործունեության նկատմամբ: Ապացուցված է, որ երեխայի նկարի վերլուծությունը կարող է տալ արժեքավոր լրացուցիչ նյութ ինչպես ինտելեկտուալ հնարավորությունների որոշման, այնպես էլ անձի որոշակի վիճակների տարբերակված ախտորոշման ժամանակ (Էպիլեպսիայի, շիզոֆրենիայի ժամանակ նկարներին բնորոշ յուրահատկությունը): Կախված ինտելեկտուալ զարգացման մակարդակից՝ նկարներն ունեն տարբեր բնույթ: Այսպես օրինակ, թեթև մտավոր խնդիրներ ունեցող երեխաները ի վիճակի են նկարել ինքնուրույն ընտրված թեմաներով, բայց նրանց մոտ հաճախ նկարելու ընթացքում լինում են ոչ ադեկվատ շեղումներ սկզբնական ընտրված առաջադրանքից և նկարի լրացումներ՝ դրա հետ կապ չունեցող օբյեկտներով: Այս երեխաների մոտ նաև նկատվում են պատկերի տրամաբանության խանգարումներ: Երբեմն նկարելու ընթացքում երեխաներն օգտագործում են տարբեր գույների մատիտներ, երբեմն էլ ամբողջ նկարը առանց

որևէ տրամաբանության կատարվում է մեկ գույնով: Այս երեխաները, համեմատած ինտելեկտուալ ավելի լուրջ խնդիրներ ունեցող երեխաների, ավելի քննադատաբար են մոտենում իրենց նկարներին: Նկարելիս նրանք կարող են ունենալ դրական հույզեր:

Ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաների նկարներն ունեն թեմաների ավելի նեղ շրջանակ: Նրանց կողմից ընտրված թեմատիկան էապես պայմանավորված է նրանով, թե ինչ են նրանք նկարել նախկինում: Երեխաները շեղվում են նկարելու ժամանակ: Նրանց կողմից պատկերված օբյեկտները միմյանց հետ տրամաբանական կապեր չունեն: Նկարելիս նրանք օգտագործում են մեկ կամ երկու գույն: Այս խմբի երեխաներն իրենց գործունեության արդյունքների նկատմամբ քիչ քննադատ են: Նրանք չեն կարող պատկերել առարկայական նկարներ: Նկարելու ընթացքում նրանք անընդհատ տեղափոխում են իրենց ուշադրությունը այլ առարկաների վրա, մոռանում են հրահանգը: Որպես կանոն՝ նրանք օգտագործում են այն գույնի մատիտը, որը առաջինն են բռնել:

Լարվածության նվազեցման և կոնտակտի ստեղծման համար միջոց կարող է ծառայել նաև երեխայի հետ **զրույցը**: Պետք է հիշել, որ զրույցի ժամանակ կարելի է ստանալ մի շարք արժեքավոր տեղեկություններ երեխայի զարգացման մեջ ետ մնալու և վարքի շեղումների վերաբերյալ: Դրա համար զրույցը պետք է ունենա մտածված, նպատակաուղղված բնույթ: Զրույցի ժամանակ առաջարկվում է վերհանել՝

ա) երեխայի՝ ինքն իր մասին, իր ընտանիքի, մոտիկ բարեկամների, ընկերների մասին պատկերացումների ճշգրտությունը (ազգանուն, անուն, հայրանուն, տարիք) և «ընտանիք», «հարևաններ», «բարեկամներ» հասկացությունները տարբերակելու կարողությունը,

բ) ժամանակի վերաբերյալ պատկերացումների բնույթը (ժամանակը ժամերով որոշելու կարողությունը, ժամանակային միավորների հարաբերակցության հասկացումը), տարվա եղանակներն իրենց հիմնական հատկանիշներով տարբերակելու կարողությունը (անձրև, ձյուն, քամի և այլն), բնության երևույթների մասին պատկերացումները (կայծակ, փոթորիկ և այլն),

գ) տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը («հեռու», «մո-

տիկ», «աջից», «ձախից», «վերևում», «ներքևում» հասկացությունների գործնական տիրապետում),

դ) շրջապատի վերաբերյալ տեղեկությունների պաշարը (իր երկրի, հայտնի մարդկանց, իրադարձությունների մասին տեղեկություններ):

Հաջորդականությունը, որով հարցեր են տալիս երեխային, և հենց իրենք՝ հարցերը, կախված են երեխայի տարիքից և անհատական առանձնահատկություններից:

Որոշ դեպքերում (լսողության, խոսքի խանգարումների դեպքում) բանավոր հարցերը կարող են փոխարինվել այնպիսի նկարով, որը թույլ կտա ստանալ համարժեք տեղեկություններ: Օրինակ, նկարները, որոնցում պատկերված են անհեթեթ իրավիճակներ, երեխաների մոտ ծիծաղ են առաջացնում կամ այդ անհեթեթության վերաբերյալ ակամա բացականչություն, արտահայտություն, որը արդեն տեսաձի հասկացման ցուցիչ է:

Ազատ խաղի, ստեղծագործական գործունեության և զրույցի միջոցով հետազոտվող երեխայի հետ կոնտակտ ստեղծելուց հետո կարելի է անցնել նրա ընկալման, հիշողության, ուշադրության, մտածողության, խոսքի, երևակայության, մոտորիկայի, հուզականային ոլորտի, անձի և դպրոցական գիտելիքների վերաբերյալ առանձնահատկությունների հետազոտմանը: Այս ամենը կարելի է բացահայտել՝ օգտագործելով ախտորոշիչ տարբեր նյութեր (խաղալիքներ, քարտեր, աղյուսակներ) և հոգեբանական մեթոդիկաներ: Հետազոտության անցկացման ընթացքում կարևոր է ուշադրություն դարձնել մի շարք գործոնների:

Առաջադրանքի պահանջի և նպատակի հասկացում: Երեխային որևէ առաջադրանք ներկայացնելուց առաջ տրվում է այս կամ այն հրահանգը/պահանջը: Յուրաքանչյուր առաջադրանքի ժամանակ կարևոր է որոշել՝ ընկալում է արդյոք երեխան պահանջը և արդյոք փորձեր անում՝ այն հասկանալու համար: Մտավոր խնդիրներ չունեցող երեխաներն ուշադիր լսում են պահանջը և այն դեպքում, երբ չեն հասկացել, խնդրում են կրկնել այն: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները, այդ թվում նաև ուշադրության կենտրոնացման խնդիրներ ունեցող երեխաները, բավարար չափով իրենց ուշադրությունը չեն կենտրոնացնում առաջադրանքի պահանջի վրա, և, չլսելով այն մինչև վերջ, սկսում

են պատահականորեն կատարել առաջադրանքը:

Կարևոր է բացահայտել, թե ինչ տիպի պահանջն է հասկանալի երեխային՝ խոսքային (միայն խոսքային, խոսքային՝ ուղեկցվող տեսողական ցուցադրությամբ), թե՛ ոչ խոսքային:

Ինտելեկտուալ խնդիրներ չունեցող երեխաները, որոնք ունեն պահանջված լսողություն, կատարում են իրենց տարիքին համապատասխան առաջադրանքները՝ լսելով խոսքային պահանջը: Որոշ դեպքերում նրանք, միայն նայելով առաջադրանքին, կարող են այն կատարել: Օրինակ, երբ երեխային ցույց են տալիս «փոսիկների» մեջ տեղադրված երկրաչափական պատկերներով տախտակը, այնուհետև հանում են այդ պատկերները, սովորաբար երեխան վերցնում է և ճշտորեն տեղադրում է դրանք իրենց համապատասխան տեղերում: Մտավոր խնդիրներ ունեցող երեխային, սովորաբար, պետք է ասել պահանջը և տալ ուղղորդող հարցեր. «Սա որտե՞ղ պետք է դնենք»: Զարգացման մեջ բավականին ետ մնացող երեխաները՝ կիսականան առաջադրանքի պահանջը մեծահասակի ցույց տալուց հետո միայն, թե ինչպես այն պետք է կատարել: Կարևոր է իմանալ՝ արդյոք երեխան ի վիճակի է հիշողության մեջ պահել իրեն առաջադրված պահանջը: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները հաճախ չեն հիշում պահանջը և չեն կարողանում ավարտին հասցնել առաջադրանքը: Սա, իհարկե, կարելի է ասել նաև այն երեխաների մասին, ովքեր ունեն հիշողության և ուշադրության հետ կապված խնդիրներ:

Գործունեության բնույթը առաջադրանքների կատարման ժամանակ: Բոլոր դեպքերում պետք է որոշել՝ հետաքրքրությամբ է արդյոք երեխան կատարում տրված առաջադրանքը, թե մեխանիկորեն: Բացի այդ, պետք է ուշադրություն դարձնել այդ հետաքրքրության կայունության աստիճանին:

Կարևոր է նաև հետազոտության ընթացքում պարզել, թե ինչքան կենտրոնացած է երեխան աշխատում, ինչպիսին է նրա աշխատունակությունը: Որոշ երեխաներ ամբողջ ժամանակ ուշադիր են, իսկ որոշները անընդհատ շեղվում են կողմնակի ազդակներից և շուտ հոգնում: Երկրորդ դեպքում պետք է պարզել, թե ինչն է ազդում գործունեության բնույթի վրա՝ կենտրոնանալու անկարողությունը, թե արագ հոգնելիու-

թյունը:

Բացի այդ, կարևոր է հասկանալ՝ կարողանում է երեխան, անհրաժեշտության դեպքում, օգտվել առաջարկվող օգնությունից: Ինչքան արտահայտված է այդ կարողությունը, այդքան բարձր է երեխայի ուսանելիությունը: Տարիքին համապատասխան զարգացում ունեցող երեխաներն ընկալում են օգնությունը և ի վիճակի են օգտագործել իրենց համար ցուցադրված գործողության ձևը նմանատիպ այլ առաջադրանքներ կատարելիս: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները կարիք ունեն ավելի շատ օգնության: Սակայն այն որևէ էական արդյունք չի տալիս: Այս երեխաները ցածր ուսանելիություն ունեն:

Երեխայի վերաբերմունքը/արձագանքը աշխատանքի արդյունքի նկատմամբ: Որպես կանոն՝ նորմալ ինտելեկտ ունեցող երեխաները կարող են գնահատական տալ իրենց կատարած աշխատանքին: Նրանք ուրախանում են իրենց հաջողություններով և տխրում են, երբ չեն կարողանում անել: Վարքային խնդիրներ ունեցող որոշ երեխաներ ցույց են տալիս, թե իրենց չի հետաքրքրում հաջողությունների բացակայությունը: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները ի վիճակի չեն ճիշտ գնահատել իրենց աշխատանքի արդյունքները: Սակայն նրանք անտարբեր չեն շրջապատողների կողմից իրենց գործունեության գնահատմանը: Մտավոր լուրջ խնդիրներ ունեցող երեխաները չեն կարողանում գնահատել իրենց աշխատանքը և անտարբեր են շրջապատողների գնահատականին:

Ընդհանուր հուզական արձագանքը հետազոտության փաստի նկատմամբ: Երեխաները հետազոտության ժամանակ, որպես կանոն, ցուցաբերում են ամաչկոտություն և որոշակի լարվածություն: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաներն անտարբեր են հետազոտության փաստի նկատմամբ և հետազոտող մասնագետների հետ խոսելիս հաճախ չեն պահում «սահմանները»:

Հետազոտման ժամանակ կարևոր է պահպանել առաջադրանքների տրման պարզից բարդ սկզբունքը: Սկզբում պետք է երեխային առաջարկել այնպիսի առաջադրանք, որը նա ի վիճակի է կատարել, այնուհետև կարելի է անցնել ավելի բարդ՝ իր տարիքին համապատասխան առաջադրանքների: Հետազոտության ժամանակ կարևոր է նաև

խոսքային և ոչ խոսքային նյութերի հերթագայումը. այսպիսի մեթոդիկայի դեպքում երեխաները շուտ չեն հոգնում: Եվ ամենակարևորը՝ հետազոտման ընթացքում պետք խրախուսել երեխային [4]:

Մանկավարժահոգեբանական հետազոտման ծրագիրը կօգնի մասնագետներին առավել համակարգված և արդյունավետ կազմակերպել վերոհիշյալ աշխատանքները:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն	Մեթոդներ
<i>I. Ընդանուր տեղեկություններ</i> Անուն, ազգանուն, ծննդյան թիվ, դպրոց ընդունվելու տարեթիվ: Արդյոք հաճախել է հատուկ հաստատություն:	Փաստաթղթերի ուսումնասիրում
<i>II. Հարգացման պատմություն</i> Ծնողների առողջական վիճակը, մոր հղիության և ծննդաբերության ընթացքը, երեխայի վաղ զարգացման առանձնահատկությունները, մանկական հիվանդությունները:	Զրույց ծնողների հետ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում
<i>III. Ընտանիք</i> Կազմը, փոխհարաբերությունները, նյութական վիճակը, ծնողների զբաղմունքը, վերաբերմունքը երեխայի հանդեպ:	Զրույց ծնողների հետ, Տնայց
<i>IV. Ֆիզիկական վիճակ</i> Ֆիզիկական զարգացման առանձնահատկություններ, աշխատունակություն:	Դիտարկում պարամունքների, խաղի ընթացքում

V. Ճանաչողական գործունեության առանձնահատկություններ

1. Զգայարանների վիճակը: Արդյո՞ք լինում է զգայական ընկալման խաբկանք՝ հալյուցինացիա, իլյուզիա:

2. խոսքի զարգացում: Ունի՞ կապակցված խոսք, թե՞ արտահայտվում է առանձին բառերով: Արտաբերման խնդիրները և դրանց բնույթը, բանավոր խոսքի ընկալումը (ցուցումներ, հրահանգներ, բացատրություններ), բառապաշարը, խոսքի քերականական կառուցվածքը: Կարողանո՞ւմ է արդյո՞ք տալ լիարժեք պատասխան: Առկա՞ է արդյո՞ք շատախոսություն, ոչ նպատակային խոսք: Գրավոր խոսքի ընթերցելիությունը:

3. Ուշադրություն: Ուշադրության գրավումը, կենտրոնացումը, կայունությունը, բաշխումը, գործունեության մի տեսակից մյուսին անցնելու կարողությունը:

4. Ընկալում: Գիտակցում է արդյո՞ք շրջակա իրավիճակը: Ունենո՞ւմ է գիտակցության մթագնում: Գիտի՞ արդյո՞ք պարզ առարկաների անվանումը և նշանակությունը: Կարողանո՞ւմ է համադրել առարկաները և նրանց պատկերները: Հասկանո՞ւմ է նկարների բովանդակությունը: Համեմատելու ունակությունը, կարևորի առանձնացումը, առարկաները դասակարգելու և խմբավորելու ունակությունը, ինքնուրույն ընկալելու ունակությունը, պատճառահետևանքային կապ գտնելու ունակությունը:

5. Հիշողություն: Հիշողության գերիշխող ձևը՝ տեսողական, լսողական, «խառը»: Հիշելու արագությունը, երկարատևությունը: Ինչն է ավելի հեշտ հիշում՝ թվերը, փաստերը, նկարագրությունը: Վերհիշելու և մտապահելու առանձնահատկությունները:

6. Ուսումնական նյութի ընկալում: Վերաբերմունքը առանձին առարկաների նկատմամբ, պատկերացում ձևի և չափի մասին, կարդալու, գրելու և հաշվելու ունակություն, կարդացածը (լսածը) պատմելու, անգիր սովորելու ունակություն: Ինքնասպասարկում, ձեռքի աշխատանք, նկարչություն, նոր նյութի յուրացում, մանկավարժի շտկողական աշխատանքի արդյունքները:

7. Հետաքրքրություններ (բացակայում են, թույլ են արտահայտված, անհամաչափ են բաշխված): Ինչո՞վ է հետաքրքրվում՝ աշխատանք, երգ, նկարչություն, պար և այլն:

Բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում,

մանկավարժահոգեբանական հետազոտություն՝ գործնական նյութերի միջոցով,

խոսքի դիտարկում, զրույց երեխայի հետ,

լոգոպեդական հետազոտություն,

գրավոր աշխատանքների ուսումնասիրում

Երեխայի դիտարկում դասերին և դասերից դուրս, զրույց երեխայի հետ, պրակտիկ աշխատանքների ուսումնասիրում

<i>VI. Հուզականային ոլորտ</i> Երեխայի գերիշխող տրամադրությունը (ուրախ, տխուր); գրգռվածություն, արգելակվածություն, անհավասարակշռվածություն, արձագանք շրջակա իրադրությանը: Բնորոշ են արդյոք վախի, զարմանքի, հիացմունքի, կարեկցանքի զգացումները: Կամային հատկությունների դրսևորում, զսպվածություն անթույլատրելի արարքների հանդեպ:	Երեխայի դիտարկում գործունեության տարբեր ձևերում, մանկավարժահոգեբանական հետազոտություն գործնական նյութերի միջոցով,
<i>VII. Անձի առանձնահատկությունները</i> Վարքի կանոնների պահպանում, ինքնադրսևորում ուսումնական, խաղային, աշխատանքային գործունեության մեջ, վերաբերմունք հարազատների, մտերիմների, ընկերների նկատմամբ, փոխհարաբերությունները մեծահասակների, այլ երեխաների հետ, հակվածություններ (սեր, կապվածություն, բարյացակամ վերաբերմունք շրջապատին, ստելու, վնաս հասցնելու միտում, ագրեսիվություն, թափառաշրջիկության, մուրացկանության միտում և այլն):	Երեխայի դիտարկում գործունեության տարբեր ձևերում, գրույց երեխայի շրջապատի հետ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԸ

Երեխաների մանկավարժահոգեբանական հետազոտության համար մենք առաջարկում ենք գործնական նյութերի և մեթոդիկաների ցանկ, որոնք պետք է կիրառվեն՝ հաշվի առնելով հետազոտության նպատակները, երեխաների անհատական առանձնահատկությունները և տարիքը: Անհրաժեշտ է նշել, որ փորձարարական հոգեբանական մեթոդիկաները և թեստային նյութերը կիրառվում են, որպես կանոն, հոգեբանների կողմից, իսկ առաջադրանքները, որոնք տրված են աղյուսակների կամ քարտային աշխատանքների տեսքով, ինչպես նաև խաղային նյութերը, կիրառվում են հատուկ մանկավարժների կողմից մանկավարժահոգեբանական հետազոտությունների ժամանակ:

ԸՆԿԱԼՈՒՄ

Ընկալումը առարկաների հատկանիշների ամբողջականության արտացոլումն է մարդու գիտակցականի մեջ: Իմացական ոլորտի խնդիրներ ունեցող երեխաներն դժվարություններ են ունենում ուսուցման մեջ, քանի որ չեն կարողանում ընկալել և յուրացնել նյութը: Շատ կարևոր է ժամանակին երեխաների մոտ ձևավորել առարկաների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը:

Այսօր հոգեբանության մեջ երեխաների ընկալման առանձնահատկությունները բացահայտող բազմաթիվ նյութեր կան կուտակված: Ինչպես գիտենք, ընկալման խնդիրներ ունեցող երեխաների մոտ առկա է տեմպի դանդաղում, ոչ բավարար ակտիվություն և ընկալման նպատակաուղղվածություն: Հենց այս դրսևորումներն էլ երեխաների համար ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ուսուցման մեջ: Կարևոր է ճիշտ ժամանակին որոշել, թե ինչպես է երեխան ընկալում օբյեկտների այնպիսի հատկություններ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը և դիրքը տարածության մեջ: Եթե ավելի մանրամասնենք, ապա կարևոր է բացահայտել՝


- Գույները համադրելու և տարբերակելու կարողությունը, գույների ճանաչումը:

- Առարկաները ըստ ձևի համադրելու և տարբերակելու կարողությունը, երկրաչափական պատկերների ճանաչումը:
- Չափի մասին պատկերացումները, ձևով կամ գույնով միանման, բայց չափերով տարբեր առարկաները համեմատելու կարողությունը, «մեծ», «փոքր», «միանման» հասկացությունները տարբերակելու կարողությունը:
- Տարածական կողմնորոշման զարգացման մակարդակը. տարածական հարաբերությունների վերաբերյալ գիտելիքները, թղթի վրա, տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը, աջ-ձախ, վերև-ներքև և այլ հասկացություններ տարբերակելու կարողությունը, նկարում պատկերի (գրուցակցի) աջ և ձախ կողմերը տարբերելու կարողությունը:
- Գործունեության նպատակաուղղվածությունը, երեխայի համակցված ունակությունները (պատկերներով աշխատելու, ամբողջը և մասը համադրելու, ընկալվող օբյեկտների վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունը), կամային ջանքերը, հետաքրքրության կայունությունը:
- Ակնառու - պատկերավոր պատկերացումները, ծանոթ պատկերները ամբողջական ընկալելու կարողությունը, տեսաշարժողական կոորդինացիան, գրաֆիկական հմտությունները:
- Ծանոթ հեքիաթի առանձին դրվագները ճանաչելու ունակությունը, ամբողջը և մասը տարածականորեն համադրելու կարողությունը [7]:

ԸՆԿԱԼՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ

1. Ծանոթ առարկաների մասեր, եզրագծեր, ուրվագծեր պարունակող քարտեր, «Խառնված» պատկերներ (մեկը մյուսի վրա նկարված առարկաներ – Ուոլթեր Փոփելտեյթորի ֆիգուրները) մեթոդիկան:
2. Պատկերների արկղիկ (Ջաբրամաայայի մեթոդիկան):
3. Կոոսի խորանարդիկները:
4. Սեգենի տախտակներ՝ տարբեր բարդության:

5. Անավարտ պատկերներ (Գոլովինայի մեթոդիկան):
6. Առարկայական նկարներ՝ բաժանված 2-3-4 մասերի:
7. Նկարներ՝ «աջ», «ձախ», «վերև», «ներքև», «մեջտեղում» հասկացությունները որոշելու համար:
8. Վեճերի «Էտալոններ» մեթոդիկան:
9. Ռավենի «Պրոգրեսիվ մատրիցաներ» մեթոդիկան և այլն:



«Կոոսի խորանարդիկներ» մեթոդիկան

նախատեսված է 5 և բարձր տարիքի երեխաների համար, որի միջոցով կարելի է հետազոտել երեխայի ընկալումը, ինտելեկտուալ մակարդակը, մտածողության տեսակը, ուշադրության կայունությունը, տեսողական և շարժողական հիշողությունը, հետաքրքրվածությունը և այլն: Այն բաղկացած է 9 խորանարդիկներից, որոնց 2 կողմը

ներկված է կարմիր գույնով, 2 կողմը՝ սպիտակ, իսկ մյուս 2-ը՝ սպիտակ և կարմիր: Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրվում են ժամանակ և միավորներ (օրինակ, եթե A, B, C առաջադրանքները երեխան կատարում է 1-45 վ ժամանակահատվածում և առաջին անգամից, ապա տրվում է 2 միավոր) [9]:

«Սեգենի տախտակներ» մեթոդի-

կան նախատեսված է 1-7 տարեկան երեխաների համար, որի օգնությամբ կարելի է հետազոտել երեխայի տեսողական ընկալումը՝ գույնի, ձևի, չափի ընկալումը, տեսաշարժողական կոորդինացիան, ակնառու-գործնական մտածողությունը, տրամաբանությունն ու տարածական կողմնորոշումը և այլն:



Սեգենի տախտակները կտրված պատուհանիկներով, փայտից կամ պլաստմասից տախտակներ են, որոնց մեջ տեղադրվում են տարբեր ներդիրներ: Դրանք լինում են՝

- տարբեր չափերի,
- տարբեր բարդության,
- տարբեր թեմատիկայով՝ երկրաչափական պատկերներ, տրանսպորտ, կենդանիներ, սնունդ, միրգ և բանջարեղեն, տարվա եղանակներ և այլն,
- երեխաների տարիքային խմբին համապատասխան:



Սեգենի տախտակների պարզ ձևերում երկրաչափական պարզ պատկերներ են, իսկ ավելի բարդ ձևերում՝ պատուհանիկներում տեղադրվում են մի քանի մասերից բաղկացած պատկերների համակցություններ: Օրինակ, քառակուսին հավաքվում է 2 եռանկյուններից կամ, միավորելով փազլի մասերը,


երեխան ստանում է թրթուռի, շան կամ մեքենայի նկարը:

Մտավոր զարգացման խնդիրներ չունեցող երեխաները, 2 տարեկանից սկսած, կարողանում են ճիշտ համադրել պատկերը իր պատուհանիկի հետ և տեղադրել համապատասխան տեղը: Նրանցից շատերը պատկերները տեղադրելիս կարող են ունենալ զուտ տեխնիկական դժվարություններ՝ կապված այդ տարիքում մանր շարժումների անհարմարությունների հետ: Հոգեբանական զարգացման հապաղում ունեցող երեխաները հիմնականում հասկանում են պահանջի իմաստը, սակայն դժվարություններ են ունենում ավելի բարդ երկրաչափական պատկերների տարբերակման ժամանակ (օվալ, կիսաշրջան, շեղանկյուն, վեցանկյուն և այլն): Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները գործում են քառսային ձևով, պատահականորեն, այսպես կոչված փորձի և սխալի մեթոդով՝ առանց հաշվի առնելու պատուհանիկների ձևը: Ավելի խորը մտավոր խնդիրներ ունեցող երեխաները ոչ նպատակային գործողություններ են անում պատկերների հետ՝ դնում են բերանը, ծծում, թխկթխկացնում սեղանին և այլն:


Սեգենի տախտակներ մեթոդիկան անընդհատ կատարելագործվում է, և այժմ կան մեթոդիկայի բազմաթիվ տարբերակներ [18]:

«Ուոլթեր Փոփելթեյթորի (Walther Poppelreuter) պատկերները» մեթոդիկան նախատեսված է տեսողական ընկալումը հետազոտելու

համար: A4 ֆորմատի թղթի ողջ մակերեսով պատկերված են 3 խումբ եզրագծված պատկերներ, որոնք տեղադրված են մեկը մյուսի վրա [10]: Ընդամենը 14 պատկեր: Երեխան պետք է անվանի բոլոր 14 պատկերները՝ հերթականությամբ անցնելով յուրաքանչյուր խմբի վրայով, մինչև 1 բոլորով սահմանում (նկ. 1): Ավելի փոքր տարիքի երեխաների համար նախատեսված տարբերակում խառնված պատկերները կարող են առանձին ցուցադրվել A4 ֆորմատի թղթի ներքևում (նկ. 2):



նկար 1



նկար 2

«Երկրաչափական պատկերների արկղիկ» մեթոդիկայի օգնությամբ կարող ենք հետազոտել երեխայի ձևի ընկալումը, ծավալ ունեցող մարմինը իր հարթ պատկերի հետ համադրելու կարողությունը, ուրիշից օգնություն խնդրելու կարողությունը, մանր մոտորիկայի զարգացումը, սկսած 4 տարեկանից որոշել երեխայի գերակայող ձեռքը:

Նկարագրություն. Երկրաչափական պատկերներով արկղիկը դնում են երեխայի առաջ: Հետագոտողը արկղիկի միջից հանում է երկրաչափական պատկերները, ցույց է տալիս յուրաքանչյուր պատկերի հիմքը (խորանարդի հիմքը քառակուսին է), մոտեցնում է համապատասխան անցքին և գցում արկղիկի մեջ (ընդամենը 10 պատկեր): Այնուհետև դրանք նորից հանում է: Հետագոտողը վերցնում է պատկերներից մեկը, նորից մատը նորից սահեցնում պատկերի հիմքի վրայով, մոտեցնում է ձևին համապատասխան անցքին և գցում մեջը: Դրանից հետո նա ժեստով առաջարկում է երեխային շարունակել: Կարելի է տալ նաև բանավոր հրահանգ. «Գցիր պատկերը արկղիկի մեջ»: Ցուցադրումը պետք է սկսել պարզ պատկերներից:




Հետագոտության արդյունքների վերլուծություն. Զարգացման խնդիրներ չունեցող երեխաները առաջադրանքի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Մինչև 3.5 տարեկան երեխաները ուժով հրելու, «խցկելու» մեթոդով են փորձում գործել՝ առանց հաշվի առնելու անցքի ձևը: 4 տարեկանից սկսած՝ երեխաները կիրառում են փորձելու մեթոդը, իսկ արդեն 5 տարեկան երեխաները գործում են տեսողությամբ համադրելով: Կարևոր է հաշվի առնել նաև տրամադրված աջակցության (համատեղ գործողություններ, բանավոր բացատրություններ և այլն) ազդեցության տակ աշխատանքի բարելավման աստիճանը:

Զարգացման հապաղում ունեցող երեխաները առաջադրանքի նկատմամբ ցուցաբերում են հետաքրքրություն, սակայն միայն 6 տարեկանում են գործում՝ տեսողությամբ համադրելով: Ընդ որում, շատերը կարիք են ունենում կազմակերպված օգնության (շտապելու և անուշադրության պատճառով):

Ստավոր խնդիրներ ունեցող երեխաները 5-6 տարեկանում ուժով հրում են պատկերը իրեն ոչ համապատասխան անցքի մեջ: Նրանցից շատերն անգամ 7-8 տարեկանում կատարում են առաջադրանքը փորձարկելու ճանապարհով: Ավելի խորը մտավոր խնդիրներ ունեցող երեխաները պարզապես մանիպուլիացիաներ են անում պատկերներով [1]:



«Անավարտ պատկերներ» մեթոդիկայի միջոցով (ոչ ամբողջական եզրագծերով երկրաչափական պատկերներ՝ շրջան, եռանկյուն և երկու առարկաների պատկերներ՝ բզեզ, թիթեռ) գնահատվում է երեխայի տեսողական ընկալումը՝ ձևի, չափի, ինչպես նաև առարկայի ամբողջականության մասին ընկալումը, երկրաչափական պատկերները/առարկաները և դրանց մասերը համադրելու կարողությունը (նկ. 3):

Երեխաները, 5 տարեկանից սկսած, հեշտությամբ են կատարում պատկերների ամբողջականությունը վերականգնելու առաջադրանքները: Նրանք ընկալում են առաջադրանքի սկզբունքը, բայց երբեմն թույլ են տալիս որոշ անհամաչափություն (ասիմետրիա): Նկարը ամբողջացնելու մեջ սխալներ հիմնականում թույլ են տալիս զարգացման հասպտում ունեցող երեխաները: Ավելի շատ դժվարություններ նրանց մոտ լինում է շրջանը ամբողջացնելու ժամանակ: Որպես կանոն, նրանց նկարած մասի մակերեսը փոքրացված է լինում: Նրանք չեն հասկանում առաջադրանքի սկզբունքը, թույլ են տալիս արտահայտված անհամաչափություն (շատ մեծացված կամ փոքրացված ավելացող մաս), պատկերի ձևի խանգարում [14]:



Նկար 3

Առարկայական նկարներ՝ բաժանված 2-3-4 մասերի մեթոդիկայի միջոցով կարելի է բացահայտել մասերն ու ամբողջը համադրելու երեխայի կարողությունը, տարածական ընկալումը: Տարածական կողմնորոշման խնդիրներ չունեցող և նորմալ զարգացում ունեցող երեխաները 4, 5 նկարների քարտերով աշխատանքը կատարում են 3.5-4 տարեկանում, իսկ 6,7 նկարների քարտերով աշխատանքը՝ 4.5-5 տարեկանում [2]:




նկար 4, 5

նկար 6, 7

Նկարներ՝ «աջ», «ձախ», «վերև», «ներքև», «մեջտեղում» հասկացությունները որոշելու համար: 6-7 տարեկան երեխաներն ուղղորդող հարցերի միջոցով հասկանում և անվանում են, թե նկար 8-ում տղան որ ձեռքում է բռնել գնդակը, աղջիկը որ ոտքին է հագնում կոշիկը, այսինքն՝ կարողանում են տարբերակել նկարի կամ զրուցակցի աջ և ձախ կողմերը: Զարգացման խնդիրներ ունեցող 6-7 տարեկան երեխաները կարողանում են նշել իրենց աջ և ձախ կողմերը, բայց նկարում ցույց տալիս ունեն դժվարություններ: Մտավոր լուրջ խնդիրներ ունեցող երեխաները չեն կողմնորոշվում իրենց աջ և ձախ կողմերում նույնիսկ 7-8 տարեկանում, անգամ օգնության դեպքում:

6-7 տարեկան երեխաները կարողանում են կողմնորոշվել թղթի էջի վրա, տարածության մեջ, տարբերակել «աջ», ձախ», «վերև» «ներքև», «մեջտեղում» հասկացությունները (նկ. 9): Այն դեպքում, երբ երեխան ունի տարածական ընկալման խնդիրներ, նա տվյալ քարտի հետ աշխատանքի ժամանակ սխալներ է թույլ տալիս:






նկար 8

նկար 9

նկար 10

Նկար 10-ում պատկերված քարտի միջոցով կարելի է հետազոտել երեխայի տարածական կողմնորոշման մակարդակը հարթության վրա առարկաների դիրքի վերաբերյալ, տեսողական ընկալումը, հիշողության միջոցով օրինակը վերստեղծելու կարողությունը, սեփական գործողությունները առաջադրված նպատակին համապատասխան պլանավորելու կարողությունը, ինքնակառավարման առկայությունը: 4 տարեկան երեխան ըստ օրինակի և որոշ հուշման դեպքում կարող է 3 փայտիկից ստանալ օրինակը: 5 տարեկան երեխան հետաքրքրություն է ցուցաբերում առաջադրանքի նկատմամբ և կարողանում է ինքնուրույն տեսողական վերլուծություն կատարել (տեսողությամբ համադրել), առանց դժվարության հիշողությամբ վերստեղծել կամ ուղղել սխալ կատարածը: Ջարգացման խնդիրներ ունեցող երեխաների մոտ 5 տարեկանում դեռևս ձևավորված չէ ինքնակառավարման կարողությունը, և նրանք չեն կարող ըստ օրինակի վերարտադրել պատկերը. նրանք ուղղակի խաղում են փայտիկներով: Անհրաժեշտ է առաջադրանքի փուլային իրականացում [3]:

Վենզերի «Էտալոններ» մեթոդիկան ուղղված է ընկալման զարգացման մակարդակը ախտորոշելուն և պարունակում է առաջադրանքներ, որոնք պահանջում են առարկաների ձևի համադրություն տրված օրինակների/էտալոնների հետ: Երեխաները պետք է նշեն այն առարկաների պատկերները, որոնք համապատասխանում են յուրաքանչյուր էտալոնին [12]: Առաջադրանքը բաղկացած է 4 էջից, յուրաքանչյուր էջում կան առարկաների 16 պատկեր և էտալոնը (նմուշ-օրինակը): Առարկաների պատկերները նույնն են բոլոր էջերում, բայց տարբեր են էտալոնները (նկ. 11):



նկար 11

Առավելագույն միավորը (բոլոր 4 էջերի) – 32 միավոր է: Սխալ է համարվում ոչ ճիշտ ընտրված պատկերը կամ ընդհանրապես չնշվածը: Ամեն սխալի համար հանվում է մեկ միավոր:

Ընկալման զարգացման


մակարդակը՝ 32-27 միավոր – բարձր

26-20 միավոր - միջին

19 միավոր և ցածր – ցածր

Ռավենի «Պրոգրեսիվ մատրիցաներ» մեթոդիկան բացահայտում է տեսողական ընկալման մակարդակը, ակնառու-պատկերավոր մտածողության մակարդակը և հիշողության մակարդակը: Այն նախատեսված է 5-9 տարեկան երեխաների համար, որոնք այս տարիքում արդեն հասկանում են պահանջը և կատարում են առաջադրանքը [17]: Որպես կանոն

երեխաները գործում են գիտակցված՝ տեսողությամբ համադրելու միջոցով գտնելով համապատասխանող հատվածը: Հետազոտողի կողմից տրվում է հետևյալ հրահանգը. «Նկարի մեջ մի հատվածը բացակայում է: Ներքևում տեղակայված 6 հատվածներից մեկը հենց այդ փնտրվող հատվածն է: Պետք է գտնել նկարը և հատվածը միմյանց հետ կապող օրինաչափությունը և նշել բացակայող հատվածի համարը» (նկ. 12):



նկար 12

Աշխատանքին խաղային բնույթ տալու համար, ինչպես նաև օգնության նպատակով կարելի է կտրահանել պատկերի բաց թողնված մասը և հատվածները: Հետազոտության իրականացման այս ձևը թույլ կտա հետևել աշխատանքի կատարման բնույթին (փնտրում է համապատասխան հատվածը կամ պատահական ձևով տեղադրում է բոլոր հատվածները):

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Տարիքին համապատասխան մտավոր զարգացում ունեցող երեխաներն արդեն 5-6 տարեկան հասակում հասկանում են պահանջը և կատարում են առաջադրանքը: Որպես կանոն նրանք գործում են մտածված՝ տեսողական համադրման միջոցով գտնելով համապատասխան հատվածը, միևնույն ժամանակ նրանք մեծ հետաքրքրություն են ցուցաբերում աշխատանքի նկատմամբ և ուրախություն են ապրում հաջող իրականացման դեպքում: 7 տարեկան հասակում հոգեկան զարգացման հապաղում ունեցող երեխաները կազմակերպված օգնության դեպքում կատարում են նկար 12-ի առաջին հինգ աղյուսակները: 2-րդ շարքի 5 աղյուսակները կատարելիս նրանց անհրաժեշտ է զգալի աջակցություն:

Մտավոր խնդիրներ ունեցող 8-9 տարեկան երեխաները կարիք ունեն պահանջի մանրամասն բացատրման: Նրանք փորձում են պատահակա-նորեն լրացնել բաց թողնված հատվածը: Սակայն ավելի բարդ (նկար 12-ի 2-րդ շարքի աղյուսակները) առաջադրանքները չեն կարողանում կատա-րել նույնիսկ զգալի օգնության դեպքում: Նրանք չեն ընկալում առաջադ-րանքի կատարման սկզբունքը: Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները չունեն կայուն հետաքրքրություն տվյալ առաջադրանքի նկատմամբ, և ըն-թացքում եղած հետաքրքրությունը մարում է [4]:

ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադրությունը հոգեկան գործունեության ուղղվածությունը և նրա կենտրոնացվածությունն է այն օբյեկտի վրա, որը անձի համար ունի որոշակի նշանակություն: Ուշադրության խնդիրներն ավելի հաճախ հանդիպում են մտավոր խնդիրներ ունեցող երեխաների մոտ և բա-ցասաբար են անդրադառնում նրանց գործունեության վրա: Մասնա-գետները նշում են, որ այդ երեխաները մեծ դժվարությամբ են իրենց ուշադրությունը մի օբյեկտից տեղափոխում մյուսի վրա: Նորմայի հետ համեմատած՝ նրանց ուշադրությունը ավելի քիչ կայուն է: Խնդիրներ են առաջանում նաև ուշադրությունը մի քանի օբյեկտների միջև բաշ-խելու անհրաժեշտության ժամանակ:

Ուշադրության զարգացման վրա բացասական ազդեցություն է ունե-նում մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին բնորոշ սահմանափակ հետաքրքրությունների շրջանակը և բարձր հոգնելիությունը: Շատ կարևոր է հասկանալ, թե ինչն է հանդիսանում ցածր արդյունքների պատճառ՝ հետաքրքրության բացակայությունը, պահանջը չհասկանա-լը, բարձր հոգնելիությունը կամ ուշադրության այնպիսի հատկանիշնե-րի ձևավորված չլինելը, ինչպիսիք են կայունությունը, կենտրոնացումը, ծավալը, տեղափոխելիությունը, բաշխումը:

ՈւՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ


- 1. Բուրդոնի, Պիերոն-Ռուգերի բլանկերը:**
- 2. Շուլտեի աղյուսակները:**

3. Վեկսլերի «Բացակայող մասնիկներ» մեթոդիկան:

4. Մյունստերբերգի թեստը՝ ընկալման և ուշադրության հետազոտման համար:

Մի քանի մեթոդիկաներ ներկայացնենք մանրամասն:

Բուրդոնի, Պիերոն-Ռուզերի բլանկերի միջոցով հետազոտում են ուշադրության կենտրոնացման և կայունության աստիճանը, ուշադրության տեղափոխելիությունն ու բաշխումը [11]: Հետազոտությունն իրականացվում է տառերից (թվերից, պատկերներից) կազմված հատուկ բլանկերի միջոցով: Հետազոտվողը շարք առ շարք դիտում է տեքստը կամ բլանկը և գիծ է քաշում օրինակում ցուցադրված կամ հանձնարարված որոշակի տառերի կամ պատկերների վրա (նկ. 13), կամ պատկերների մեջ ավելացնում է որոշակի նշաններ (նկ. 14):



նկար 13

Բլանկերն իրենց ձևով և բարդության աստիճանով տարբեր են՝ կախված երեխայի տարիքից:

Փորձի արդյունքները գնահատվում են բաց թողած և չգծված նշանների քանակով և իրականացման ժամանակով: Կարևոր ցուցանիշ է համարվում իրականացման որակի և տեմպի բնույթը:



□	♥	○	□	♥	□	○
♥	□	♥	○	□	♥	□
□	○	♥	□	○	□	♥
□	♥	□	♥	○	□	○
♥	○	♥	○	□	○	♥

նկար 14

«Շուլտեի աղյուսակներ» մեթոդիկայի միջոցով կարելի է հետազոտել ուշադրության կայունությունը, ինքնուրույն աշխատելու արդյունավետությունը, հայացքով փնտրելու և կողմնորոշվելու արագությունը, ուշադրության ծավալը [8]:

6	13	2	15	22
1	4	19	21	17
8	11	3	18	16
12	9	5	7	23
25	14	20	24	10

5	12	8	16	25
22	17	19	14	10
13	1	7	21	4
20	24	11	23	2
9	18	3	6	15

24	3	8	16	6
10	21	4	12	14
19	7	18	2	25
1	22	5	20	11
15	13	9	17	23

17	9	24	5	14
13	11	1	7	3
21	15	19	4	22
6	2	25	10	12
23	18	8	16	20

8	21	1	10	17
16	23	14	6	2
22	11	3	13	20
5	18	7	25	9
24	12	4	19	15

նկար 15

Նկարագրություն. Հետազոտվողին հերթականությամբ առաջարկվում են 5 աղյուսակներ, որոնց վրա պատահական կարգով տեղադրված են 1-25 թվեր (նկ. 15):

Հետազոտվողը գտնում, ցույց է տալիս և անվանում է թվերը աճման կարգով: Այս ամենը կրկնվում է բոլոր 5 աղյուսակների հետ:

Թեստի հրահանգը. Հետազոտվողին ներկայացնում են առաջին աղյուսակը. «Այս աղյուսակում թվերը տեղադրված են պատահական կարգով»: Այնուհետև աղյուսակը ծածկում են և շարունակում. «Ցույց տուր և անվանիր բոլոր թվերը՝ սկսած 1-ից մինչև 25-ը: Փորձիր դա անել հնարավորինս արագ և առանց սխալների»: Աղյուսակը բացում են և առաջադրանքի կատարման հետ միաժամանակ միացնում են վայրկենաչափը: Մնացած 4 աղյուսակները ներկայացվում են առանց հրահանգի:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը կատարվում է համաձայն աղյուսակի: Վերլուծության հիմնական ցուցանիշը յուրաքանչյուր աղյուսակի առաջադրանքի կատարման տևողությունն է, ինչպես նաև սխալների քանակը: Աշխատանքի արդյունավետության մակարդակը գնահատելիս հաշվի է առնվում հետազոտվողի տարիքը, որը համեմատվում է տարիքային չափանիշների հետ, ինչը ներկայացված է հետևյալ աղյուսակում:

տարիք	5 միավոր	4 միավոր	3 միավոր	2 միավոր	1 միավոր
6	60-56	61-70	71-80	81-90	> 90
7	55-51	56-65	66-75	76-85	> 86
8	50-46	51-60	61-70	71-80	> 81
9	46-41	46-55	56-65	66-75	> 76
10	40-36	41-50	51-60	61-70	> 71

Աշխատանքի արդյունավետությունը որոշվում է աղյուսակների հետ աշխատանքի տևողության ընդհանուր գումարի և աղյուսակների քանակի հարաբերակցությամբ: Աշխատունակության մակարդակը որոշվում է առաջին աղյուսակի առաջադրանքի կատարման տևողության և աշխատանքի արդյունավետության հարաբերակցությամբ, իսկ հոգեկան կայունությունը որոշվում է 4-րդ աղյուսակի առաջադրանքի կատարման տևողության և աշխատանքի արդյունավետության հարաբերակցությամբ:

«**Բացակայող մասնիկներ**» մեթոդիկան իրենցից ներկայացնում է 20 քարտերից բաղկացած աղյուսակների շարք, որտեղ պատկերված

են բացակայող մասնիկներ ունեցող առարկաներ (Վեկսլերի մեթոդիկայից): Դրանց միջոցով կարելի է գնահատել **տեսողական ուշադրությունը և կարևոր էլեմենտները նկատելու կարողությունը** (նկ. 16): Մեկ խնդրի լուծման տևողությունը 20 վայրկյան է: Ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր [13]:



նկար 16

Մյունստերբերգի թեստը ընկալման և ուշադրության հետազոտման համար: Թեստի միջոցով գնահատվում է երեխայի ուշադրության ստեղծագործականությունը, անգամ տեղեկատվության ընկալման խնդիրների դեպքում: Անհրաժեշտ նյութերն են՝ *վայրկենաչափ, սրիմուլային նյութ, գրիչ կամ մատիտ:*

Ուղեցույց. Միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված տեքստը պարունակում է 25 բառ: Երեխան պետք է 2 րոպեում ընդգծի բոլոր բառերը: Գնահատվում է ընդգծված բառերի և սխալների քանակը (նկ. 17, 18):

Դպրոցահասակ երեխաներին տրվում է հետևյալ հրահանգը. «Քո առջև տառերից բաղկացած տեքստ է դրված, որոնց միջև կան բառեր: Արագ նայիր այն, գտիր այդ բառերը և ընդգծիր դրանք: Հանձնարությունը պետք է հստակ կատարել»:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի նորմատիվներն են՝

- 9 - 10 բառ** – բարձր մակարդակ,
- 7 - 8 բառ** – միջինից բարձր մակարդակ,
- 5 - 6 բառ** – միջին մակարդակ,
- 3 - 4 բառ** – միջինից ցածր մակարդակ,
- 0 - 2 բառ** – ցածր մակարդակ:

Ա	Դ	Ու	Ռ	Գ	Յ	Կ	Ն	Ու	Ռ
Ծ	Մ	Ո	Մ	Ֆ	Ե	Հ	Ա	Ց	Ե
Ի	Ս	Մ	Ս	Ի	Ր	Տ	Ր	Ու	Ն
Կ	Ա	Տ	Ու	Ն	Ն	Կ	Ա	Ր	Կ
Բ	Ի	Ս	Ն	Ե	Լ	Ա	Կ	Թ	Ա
Ու	Լ	Ի	Կ	Ք	Ը	Ն	Կ	Ե	Ր

նկար 17

Չնայած հիշողությունը երեխայի մտավոր զարգացման մակարդակը որոշելու ժամանակ չի հանդիսանում գլխավոր ցուցանիշ՝ այն, մինչև նույն է, մեծ ազդեցություն է ունենում նրա գործունեության արդյունքների վրա: Կարևոր է որոշել, թե հիշողության որ տեսակն է առաջնային, ունակ է արդյոք երեխան օգտագործել օժանդակող հնարներ նյութի մտապահման և վերարտադրման ժամանակ:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ

1. **Ծանոթ առարկաների պատկերներով աղյուսակներ՝ մտապահման համար մեթոդիկան (հնարավոր են մի քանի տարբերակներ՝ թվերի, տառերի, բառերի, երկրաչափական պատկերների, առարկայական նկարների մտապահում և այլն):**
2. **10 բառի մտապահում մեթոդիկա (Ա.Ռ. Լուրիա):**
3. **Միջնորդավորված մտապահում մեթոդիկան՝ ըստ Ա.Ն. Լեոնտևի:**
4. **Պիկտոգրամա մեթոդիկան (Ա.Ռ. Լուրիա):**
5. **Վերարտադրելու համար նախատեսված տեքստերի աղյուսակներ:**

Ծանոթ առարկաների պատկերներով աղյուսակներ՝ հիշելու համար մեթոդիկան հետազոտում է միջնորդավորված կապեր ստեղծելու և վերարտադրման ժամանակ դրանք օգտագործելու ունակությունը, տրամաբանական հիշողության առանձնահատկությունները:

Երեխայի առաջ դնում են 6 քարտ, որոնց վրա նկարված են առարկայական նկարներ (նկ. 19): Քարտերը դնում են սեղանին իրար վրա և երեսը դեպի ներքև: Հետազոտողը անվանում է առաջին բառը, այնուհետև առաջարկում է երեխային վերցնել առաջին քարտը և օգտագործել այն լսված բառը հիշելու համար: Երեխան վերցնում է քարտը և պատմում է, թե ինչպես է հիշելու բառը նկարի միջոցով, ապա դնում է քարտը մի կողմ (երեսը դեպքի ներքև): Դրանից հետո նրան անվանում են հաջորդ բառը: Երեխան վերցնում է հաջորդ քարտը, նորից մտապահում և այդպես մինչև վերջին բառը: Վերջում երեխային տրվում է հրահանգ հաջորդաբար վերցնել քարտերը և անվանել համապատասխան բառը [7]:



նկար 19

Մտավոր զարգացման մեջ խնդիրներ չունեցող երեխաները տիրապետում են իմաստավորված հիշողության գործընթացներին և արդեն 6-7 տարեկանում կարողանում են կատարել տվյալ առաջադրանքը: Հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաները բառերը վերարտադրելիս կարիք ունեն լրացուցիչ ուղղորդման:

Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները չեն կարողանում կատարել տվյալ առաջադրանքը, չեն հասկանում առաջադրանքի իմաստը. հիշեցման դեպքում, որպես կանոն, կարողանում են անվանել քարտերի վրա պատկերված առարկաները:

Ա.Ռ. Լուրիայի 10 բառի մտապահում մեթոդիկան ամենահաճախ կիրառվող մեթոդիկաներից է: Այն հնարավորություն է տալիս հետազոտել հիշողության, մտապահման, պահպանման և վերարտադրման գործընթացները: Ոչ մի հատուկ տեխնիկական միջոց չի պահանջվում: Սակայն իրականացման ժամանակ շատ կարևոր է անաղմուկ միջավայր ապահովելը, հակառակ դեպքում փորձը իրականացնելը նպատակահարմար չէ: Փորձը սկսելուց առաջ հետազոտողը պետք է իր առջև ունենա գրված 10 կարճ բառերի շարք: Բառերը պետք է լինեն պարզ, տարաբնույթ և չունենան իմաստային կապեր, օրինակ՝ անտառ, մուրճ, հաց, դուռ, ձի, սունկ, ջուր, բեռ, աթոռ, մեղր:

Բացատրություն. «Ուշադիր լսիր: Հիմա ես կկարդամ 10 բառ: Երբ ես ավարտեմ կարդալը, դու պետք է կրկնես լսածդ բառերը, այնքան շատ, որքան հնարավոր է: Բառերի հերթականությունը կարևոր չէ»:

Հետազոտողը բառերը կարդում է դանդաղ, հստակ: Երբ երեխան

կրկնում է բառերը, հետազոտողը իր արձանագրության մեջ այդ բառերի տակ դնում է խաչ (նկար 20): Այնուհետև նա շարունակում է առաջադրանքը (2-րդ փուլ)։ «Հիմա ես նորից կկարդամ նույն բառերը: Դու պետք է կրկնես հիշածդ բառերը, ինչպես նաև նրանք, որոնք դու նախորդ անգամ բաց ես թողել: Բառերի հերթականությունը նորից կարևոր չէ:» Հետազոտողը նորից աղյուսակում արձանագրում է երեխայի կողմից ասված բառերը: Այնուհետև փորձը նորից կրկնվում է 3, 4 և 5 անգամ, բայց արդեն առանց որևէ հրահանգի: Հետազոտողը ուղղակի ասում է. «Մեկ անգամ էլ»: Եթե փորձարկման ժամանակ երեխան անվանում է ավելորդ բառեր, հետազոտողը գրանցում է դրանք խաչերի կողքին, իսկ եթե դրանք կրկնվում են, խաչեր է դնում նաև այդ բառերի տակ: Այն դեպքում, երբ երեխան փորձարկման ժամանակ փորձում է ինչ-որ ռեպլիկներ անել, հետազոտողը կանգնեցնում է նրան. որևէ խոսակցություն փորձարկման ժամանակ թույլատրել չի կարելի:

Առաջադրանքը 5 անգամ կրկնելուց հետո հետազոտողը անցնում է այլ փորձարկումների, ապա 50-60 րոպե անց նորից հարցնում է երեխային այդ բառերը (առանց հիշեցման): Արդյունքում փորձի արձանագրությունը ունենում է հետևյալ տեսքը:

N	անտառ	մուրճ	հաց	դուռ	ծի	սունկ	ջուր	բեռ	աթոռ	մեղր
1	+		+		+	+				
2	+		+			+		+		
3	+	+			+	+		+		
4	+	+								+
5	+	+			+	+		+	+	
1 ժամ անց	+	+			+	+		+	+	

նկար 20

Հետազոտության արդյունքների վերլուծությունը կատարվում է համաձայն աղյուսակի: Առաջին փորձի ժամանակ մտապահված և վերարտադրված բառերի քանակը ցույց է տալիս լսողական կարճատև հիշողության ծավալը: Նորմայում այն պետք է լինի 7 ± 2 բառ: Մտապահված և վերարտադրված բառերի քանակը 1 ժամ հետո ցույց է տալիս լսողական երկարատև հիշողության ծավալը:

Նորմայում երեխան առաջին անգամից մտապահում է 4-5 բառ, իսկ 3-5 կրկնություններից հետո՝ բոլոր 10 բառերը: Եթե երեխան նույնիսկ 5 անգամ կրկնելուց հետո չի կարողանում մտապահել և վերարտադրել բառերը, ապա կարելի է խոսել ուշադրության և հիշողության խնդիրների մասին: Արագ սպառվող երեխաները մտապահում են բոլոր 10 բառերը 1-2 փորձից: Բայց հաջորդող փորձերի ժամանակ վերարտադրված բառերի քանակը կտրուկ իջնում է [15]:

«Միջնորդավորված մտապահում» մեթոդիկան՝ ըստ Ա.Ն. Լեոնտևի: Մեթոդիկան հետազոտում է միջնորդավորված կապեր ստեղծելու և վերարտադրման ժամանակ դրանք օգտագործելու ունակությունը, տրամաբանական հիշողության առանձնահատկությունները: Աշխատանքի բնույթը կայանում է նրանում, որ երեխան պետք է ինքնուրույն ընտրություն կատարի միջնորդավորման միջոցների միջև (գտնի բառին համապատասխանող նկարը):



լույս, ճաշ, գիշեր, ուսում, ճանապարհ, կաթ

Նկար 21

Նկարագրություն. Երեխայի առջև մտապահման համար դրվում են 6 բառեր և 12 ծանոթ առարկաների նկարներով քարտեր (Նկ. 21): Այնու-

հետև կարողում են բառը և խնդրում վերցնել այն քարտը, որն ամենից շատ կօգնի նրան հիշել և վերարտադրել տվյալ բառը (օրինակ՝ բառ «լույս» – քարտ «լամպ», բառ «ճաշ» – քարտ «հաց»)։ Միևնույն ժամանակ երեխային խնդրում են ասել, թե ինչպես է քարտը օգնում նրան հիշել համապատասխան բառը։ Հետազոտության վերջում երեխայի կողմից ընտրված 6 քարտերը ցուցադրվում են կամայական կարգով։ Երեխան հիշում և վերարտադրում է բառերը [7]։

Հետազոտության տվյալների վերլուծություն: 6-7 տարեկան երեխաները հետաքրքրությամբ կատարում են տվյալ առաջադրանքը՝ կապեր ստեղծելով համապատասխան նկարի հետ և օգտագործելով այդ կապերը բառերը հիշելիս։ Հոգեկան զարգացման հապաղում ունեցող երեխաները հետաքրքրություն չեն ցուցաբերում առաջադրանքի նկատմամբ։ Նրանք հասկանում են առաջադրանքի նպատակը, բայց որոշ դեպքերում նրանց անհրաժեշտ է օգնություն։

Մտավոր խնդիրներ ունեցող երեխաներն ունենում են ավելի մեծ դժվարություններ բառի և նկարի միջև կապեր ստեղծելու ժամանակ։ Նույնիսկ ճիշտ ընտրություն կատարելու դեպքում նրանք դժվարանում են մեկնաբանել իմաստային կապը։ Հաճախ նրանք սահմանափակվում են՝ անվանելով այն, ինչ պատկերված է նկարում։ Մտապահման համար առաջարկված բառը նրանց կողմից չի վերարտադրվում։

Պիկտոգրամա մեթոդիկան՝ ըստ Ա.Ռ. Լուրիայի: Պիկտոգրամա մեթոդիկան ուղղված է հիշողության գործընթացների՝ մասնավորապես միջնորդավորված մտապահման առանձնահատկությունների և նրա արդյունավետության ուսումնասիրմանը։ Նրա միջոցով բացահայտվում է նաև մտավոր գործունեության բնույթը, զուգորդություններ կատարելու աղեկվատությունը։ Այն նախատեսված է դպրոցական տարիքի երեխաների համար։

Անհրաժեշտ նյութեր: Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ է սպիտակ թուղթ, գծագրական մատիտ և բառերի խումբ, որը երեխան պետք է մտապահի։ Հետազոտողի մոտ պետք է լինի նաև վայրկենաչափ և արձանագրության թերթիկը։

Բացատրություն: Հետազոտողը դիմում է երեխային. «Հիմա մենք կփորձենք պարզել, թե ինչպիսին է քո հիշողությունը։ Ես կարտասանեմ բառեր և բառակապակցություններ, որոնք դու պետք է հիշես»։

Որպեսզի երեխայի համար ավելի հեշտ լինի մտապահել այդ բառերը, ամեն բառի համար նա պետք է նկարի ինչ-որ մի բան, որը կօգնի նրան հիշել այդ բառը: Միևնույն ժամանակ հետազոտողը նշում է, որ նկարի գեղեցիկ կամ տգեղ լինելը նշանակություն չունի, գլխավորը, որ այն օգնի նրան մտապահել տվյալ բառը: Բառեր կամ տառեր գրելն արգելվում է: Ցանկալի է հիշեցնել երեխային, որ նա խնայողաբար օգտագործի թուղթը, անհրաժեշտության դեպքում նա կարող է նկարել թղթի հետևի մասում [16]:

6-10 տարեկան երեխաների համար խորհուրդ է տրվում օգտագործել բառերի հետևյալ խումբը.

- | | |
|---------------------|------------------|
| 1. Ամառային գիշեր | 7. Բաժանում |
| 2. Խուլ տատիկ | 8. Զարգացում |
| 3. Վախ | 9. Երազանք |
| 4. Ծանր աշխատանք | 10. Համեղ ընթրիք |
| 5. Խիստ ուսուցչուհի | 11. Մեղմ քամի |
| 6. Հիվանդություն | 12. Ընկերություն |

Հետազոտության ընթացքում 10 տարեկան և բարձր երեխաների համար կարելի է նախապես ընտրել հետևյալ 11 բառերն ու բառակապակցությունները:

Առաջին տարբերակ

1. Ուրախ տոն
2. Ծանր աշխատանք
3. Զարգացում
4. Համեղ ընթրիք
5. Խիզախ արարք
6. Հիվանդություն
7. Երջանկություն
8. Բաժանում
9. Ընկերություն
10. Մուգ գիշեր
11. Թախիծ

Երկրորդ տարբերակ

1. Խուլ տատիկ
2. Պատերազմ
3. Խիստ ուսուցչուհի
4. Սոված մարդ
5. Կույր տղա
6. Հարստություն
7. Ցրտահարված աղջիկ
8. Իշխանություն
9. Հիվանդ կին
10. Կեղծիք
11. Ուրախ խնջույք

Բառերն ունեն հուզական ենթատեքստ:

Հետազոտությունն իրականացվում է 2 փուլով: Առաջին փուլում երեխայի համար ընթերցվում են բառերն ու բառակապակցությունները՝ խնդրելով յուրաքանչյուր բառի համար ինչ-որ նկար նկարել: Բառերն ու բառակապակցությունները հետազոտողը կարդում է ըստ նշված հաջորդականության, յուրաքանչյուր բառն արտասանելուց հետո 6-ից մինչև 10 տարեկան երեխաներին նկարելու համար տրվում է 1-2 րոպե, 10 տարեկան և բարձր երեխաներին՝ 30-60 վայրկյան, որից հետո հաջորդում է մյուս բառը: Բոլոր բառերի ընթերցումն ավարտելուց հետո հետազոտության առաջին փուլն ավարտվում է, երեխայի հետ իրականացվում է այլ գործունեություն, կամ նա ազատ է թողնվում:

Հետազոտության տվյալների վերլուծություն: Երկրորդ փուլն սկսվում է 30-60 րոպե հետո, երեխային առաջարկվում է նայել իր նկարած նկարներին և հիշել ընթերցված բառերն ու բառակապակցությունները, որից հետո հետազոտողը իր մոտ նշում է ճիշտ մտապահված բառերի, ինչպես նաև սխալների քանակը: Վերարտադրումը ցանկալի է իրականացնել խառը հաջորդականությամբ: Անհրաժեշտ է հարցնել երեխային, թե ինչպես նկարը օգնեց նրան հիշել այս կամ այն բառը, և ինչ կապ ունի տվյալ նկարը այդ բառի հետ: Պետք է նկատի ունենալ, որ ճիշտ է համարվում նաև բառերի հոմանիշների կիրառումը, օրինակ՝ «համեղ ընթրիք» արտահայտության փոխարեն, երբ երեխան ասում է «քաղցր ընթրիք» կամ «թափսիծ» բառի փոխարեն՝ «տխրություն» բառը և այլն:

Ըստ տարիքային զարգացման չափանիշների՝ 6-7 տարեկանում երեխաներն արդեն պետք է մտապահեն բոլոր 11 բառերը, ինչը վկայում է միջնորդավորված մտապահման արդյունավետության մասին, իսկ ոչ միջնորդավորված մտապահումը այս տարիքային խմբի համար կարող է լինել 3-5 բառ: Հետազոտվողի յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 բալ, իսկ մոտավոր պատասխանը, օրինակ՝ «երջանկության» փոխարեն՝ «ուրախություն», կամ «հիվանդության» փոխարեն՝ «հիվանդ», գնահատվում է 0.5 բալ: Եթե երեխայի միջնորդավորված մտապահումը ընդգրկում է 1-4 բալային սահմանը, ապա մտապահման արդյունավետությունը ցածր է, եթե՝ 5-8, ապա մտապահման արդյունավետությունը միջին է, իսկ եթե՝ 9-12, ապա մտապահման արդյունավետությունը բարձր է: Նմանապես 10 տարեկան և

բարձր տարիքի երեխաների դեպքում 1-4 բալլ արձանագրվում է որպես մտապահման ցածր արդյունավետություն, 5-8-ը՝ միջին, իսկ 9-12՝ բարձր արդյունավետություն:

Հետազոտության ընթացքում հաշվի է առնվում նաև նկարի ադեկվատությունը, այսինքն՝ բովանդակային կապը բառի հետ, ինչպես նաև երեխայի անհատական փորձը, նրա մոտ առաջացած զուգորդությունները, քանի որ նկարի մեջ երեխան պրոյեկտում է իր ապրումները, իր փորձը: Բացի այդ, կարևոր է նկատել՝ երեխայի նկարը կոնկրետ արտացոլում է բառի նշանակությունը, թե՛ այն ավելի վերացարկված է: Մյուս առանձնահատկությունը նկարի յուրօրինակությունն է, հետազոտողը պետք է վերլուծի՝ նկարը յուրօրինակ է իր բնույթով, թե՛ ավելի մոտ է ստանդարտ պատկերացումներին:

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մտածողությունն իմացական գործընթաց է, որի օգնությամբ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայտել երևույթների ներքին, էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի միջնորդված ու ընդհանրացված իմացություն է, ունի սոցիալական պայմանավորվածություն, իսկ նրա բարձրագույն տեսակները կապված են խոսքի հետ:

Իրադրության պահանջներից և իրենց զարգացման տարիքային փուլի յուրահատկություններից ելնելով՝ մարդիկ առավելապես օգտվում են մտածողության այս կամ այն տեսակից, ընդ որում՝ դրանք գործում են ինքնաբերաբար, խնդրային իրավիճակի կամ խնդրի ընկալման հետ միասին: Մարդու մտածողության հիմնական տեսակներն են՝

ա) **Ակնառու-գործնական մտածողությունը** իրագործվում է առարկաների հետ կոնկրետ, շոշափելի գործողություններ կատարելու ընթացքում և ապահովում է դրանց արդյունավետությունը: Ակնառու-գործնական մտածողությունը առաջնային է մարդու զարգացման ընթացքում:

բ) **Ակնառու-պատկերավոր մտածողության** դեպքում խնդիրները

լուծվում են մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով: Ակնառու-պատկերավոր մտածողության զարգացումը անձի ստեղծագործական երևակայության ծագման նախապայմանն է:

գ) Խոսքային-տրամաբանական մտածողությունն անվանում են նաև վերացական կամ տեսական: Այն ընթանում է խոսքի, լեզվի պարտադիր մասնակցությամբ: Հիմնական առանձնահատկությունը հասկացությունների և տրամաբանական կառուցվածքների օտագործումն է, որոնք գոյություն ունեն և գործում են լեզվական միջոցների օգնությամբ:

Կյանքի առաջին տարիներին զարգացած է ակնառու-գործնական մտածողությունը, որին հաջորդում է ակնառու-պատկերավորը: Դպրոցական տարիքում արդեն առավել զարգանում է խոսքային տրամաբանական մտածողությունը:

Նախադպրոցական տարիքում մտածողության զարգացման հիմնական ուղղությունը անցումն է ակնառու-գործնական մտածողությունից ակնառու-պատկերավոր մտածողության: Նախադպրոցականի մտածողությունը պատկերավոր է. այն դեռևս ձեռք չի բերել մեծահասակների տրամաբանական դատողությունները: Հետևելով Ժ. Պիաժեի օրինակին՝ մանկական մտքի յուրահատկություններն է ուսումնասիրել նաև ռուս հոգեբան Օբուխովան: Նա գրուցել է երեխաների հետ.

Հարց. Ինչո՞ւ աստղերը չեն ընկնում:

Պատասխան. Նրանք շատ փոքր են ու թեթև:

Հարց. Ինչո՞ւ է քամին փչում:

Պատասխան. Որպեսզի օգնի նավերին:

Հարց. Որտեղի՞ց է լուսինը երկնքում հայտնվել:

Պատասխան. Երևի նրան կառուցել են, կամ էլ ինքնուրույն է աճել:

Հարց. Ինչո՞ւ լուսինը չի ընկնում:

Պատասխան. Որովհետև պարաններով կապված է:

Չնայած նմանատիպ մանկական դատողություններին՝ երեխաները կարող են նաև ճիշտ եզրակացություններ անել և լուծել բավականին դժվար խնդիրներ:

Հոգեբանների կարծիքով ճիշտ պատասխաններ կարելի է ակնկալել որոշակի պայմանների դեպքում: Ամենից առաջ երեխան պետք է հասցնի մտապահել խնդիրը, բացի այդ՝ խնդրի պայմանները նա պետք է պատկերացնի: Հետևաբար անհրաժեշտ է այնպես ձևակերպել խնդիրը, որ այն հասկանալի լինի երեխային:

Կիրառելով գրույցի, հարցման, գիտափորձի մեթոդները՝ Պիաժեն եզրակացնում է, որ մեծահասակը մտածում է, դատում է սոցիալապես (այսինքն մտովի դիմում է մյուս մարդկանց), նույնիսկ եթե մնում է ինքն իր հետ մենակ, իսկ երեխան մտածում է էգոցենտրիկ (եսակենտրոն), նույնիսկ երբ գտնվում է մյուսների շրջապատում: Նա խոսում է բարձրաձայն՝ չդիմելով ոչ մեկին: Էգոցենտրիկ մտածողության դեպքում երեխան կենտրոնացած է իր դիրքերի, իր հետաքրքրությունների վրա և ի վիճակի չէ իրեն կողքից նայել քննադատորեն:

ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ

- 1. Պատկերներով քարտեր, որոնցից մեկը չի վերաբերում մյուսներին, այս կամ այն հատկությունով չի համապատասխանում (մեծությամբ, ձևով, գույնով կամ ըստ դասակարգման խմբի) կամ «Զորրորդն ավելորդ է» մեթոդիկան:**
- 2. Առաջադրանքներ, որտեղ պետք է գտնել այն հասկացությունը, որը չի վերաբերում մյուսներին:**
- 3. Առաջադրանքներ, որոնք պահանջում են տրամաբանական լուծում, կամ գտնել օրինաչափությունները (Գտի՝ր օրինաչափությունը և շարունակիր շարքը):**
- 4. Օրինաչափություններ գտնելու առաջադրանքները զարգացնում են երեխայի տրամաբանական մտածողությունը, սովորեցնում են համեմատել, դատողություններ անել, դասակարգել և եզրակացություններ անել:**
- 5. «Պարզ անալոգիաներ», «Բարդ անալոգիաներ» մեթոդիկան:**
- 6. Սյուժետային նկարներ՝ համեմատության համար:**
- 7. Տարբեր բարդության սյուժետային նկարներ (պարզ, թաքնված**

իմաստով, անհեթեթ բովանդակությամբ, իրադարձությունների հաջորդականություն պատկերող նկարների շարք)

8. «Առարկաների դասակարգում» մեթոդիկան (Տարբեր խմբերի առարկաներով քարտերի հավաքածու՝ դասակարգելու կարողությունը հետազոտելու համար):

9. Հանելուկներ:


10. Վենզերի «Սխեմատիզացում» մեթոդիկան, որը հետազոտում է ակնառու-պատկերավոր մտածողության զարգացման մակարդակը, ինչպես նաև տարածական կողմնորոշումը (12 էջ-ից բաղկացած):

11. Բառերի բլանկեր՝ ասոցիացիաների հետազոտման համար (տարբերակներից մեկը՝ հակառակ իմաստ ունեցող բառերի շարք):


12. Առածներ և ասացվածքներ:

Նշվածներից մի քանիսը ներկայացնենք ավելի մանրամասն:


«Չորրորդն ավելորդ է» մեթոդիկան իրենից ներկայացնում է պատկերներով քարտեր, որոնցից մեկը այս կամ այն հատկությունով չի համապատասխանում մյուսներին՝ մեծությամբ, ձևով, գույնով կամ ըստ դասակարգման խմբի: Ընդ որում՝ քարտերը տարբեր են լինում ըստ բարդության աստիճանի՝ կախված հետազոտվողի տարիքից: Նկար 22-ում պատկերված քարտերով կարելի է հետազոտել 3-4 տարեկան երեխաների մտածողությունը, իսկ նկար 23-ի քարտերով՝ արդեն ավելի բարձր՝ 5-6 տարեկան երեխաներին: Կրտսեր դպրոցահասակները կարող են առանց պատկերային ուղեկցման գտնել նկար 23ա-ում պատկերված չորս բառերից տարբերվող ավելորդը, իսկ նկար 23բ և 23գ քարտերի բառերից չորրորդ ավելորդները կնշեն արդեն ավելի բարձր տարիքի՝ 11-13 տարեկան երեխաները:




նկար 22



ա)



բ)



գ)

նկար 23

Տարբեր բարդության սյուժետային նկարների ընկալում և ըմբռնում մեթոդիկա:

Թաքնված իմաստ ունեցող նկարների ընկալում և ըմբռնում մեթոդիկայի կիրառման նպատակն է բացահայտել երեխաների՝ սյուժեն ամբողջական ձևով ըմբռնելու, մարդկանց մտքերն ու զգացմունքները

հերոսների միմիկաների և ժեստերի հիման վրա որոշելու, ինչպես նաև պատճառահետևանքային կապեր հաստատելու կարողությունը, որն ընկած է պատկերված իրավիճակի հիմքում (նկ. 24):

Նկարագրություն. Երեխայի առջև հաջորդաբար դնում են նկարներ և խնդրում են ասել, թե ինչ է կատարվել նկարում, այսինքն՝ բացատրել պատկերվածի իմաստը:



նկար 24

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Նորմալ մտավոր զարգացում ունեցող երեխաները 7-9 տարեկանում ըմբռնում են միտքը, որը նկարիչը ցանկացել է փոխանցել «Հեծանվորդ» նկարում: «Երկու» նկարի վերլուծության ժամանակ կարող են առաջանալ որոշակի դժվարություններ, բայց ուղղորդող հարցը օգնում է երեխաներին հասկանալ այդ նկարի իմաստը:

Հոգեկան զարգացման հապաղում ունեցող երեխաներին անհրաժեշտ է ավելի զգալի օգնություն (ուղղորդող հարցերի կարիք ունեն):

Այդ տարիքի մտավոր խնդիրներ ունեցող երեխաները սահմանափակվում են նկարի պարզ նկարագրությամբ, չեն հասկանում հերոսների միմիկաները և ժեստերը: Պատմելու ընթացքում նրանք վերադառնում են իրենց փորձից ծանոթ իրավիճակների նկարագրությանը:

Օրինակ, սկսում են պատմել, թե ինչպես են հեծանիվ քշել և ընկել, կամ ինչպես է հեծանիվի շղթան թռել և այլն: Նկարի իմաստը նրանց հասանելի չէ, օգնությունը՝ անարդյունավետ [3]:

Անհեթեթ պատկերներով նկարների ընկալում և ըմբռնում մեթոդիկայի կիրառման նպատակն է վերհանել՝ ինչքանով է երեխաների կողմից հասկացվում պատկերվածի անհեթեթությունը, շրջապատող աշխարհի մասին ունեցած ընդհանուր պատկերացումների պաշարը, հուզական դրսևորումների բնույթը, հումորի զգացման առկայությունը:

Նկարագրություն. Երեխայի առջև դնում են անհեթեթ պատկերներով նկար և դադար են տալիս՝ հետևելով հուզական արձագանքին, իսկ հետո հարցնում են՝ դուր է գալիս արդյոք նկարը և ինչով է դուր գալիս (նկ. 25):



նկար 25

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Նորմալ մտավոր զարգացում ունեցող երեխաներն արդեն 4 – 4.5 տարեկանում հասկանում են պատկերվածի անհեթեթությունը: Նրանք ժպիտով, ծիծաղով և զարմանքով են ընկալում նկարները, իսկ որոշ դեպքերում արտահայտություններ են անում. «Ամեն ինչ խառնված է», «Այսպես չի լինում» և այլն: Առկա է վառ արտահայտված ցանկություն դիտել ամբողջ նկարը:

Հոգեկան զարգացման հապաղում ունեցող երեխաները հասկանում են պատկերվածի անհեթեթությունը, բայց դիտարկելու համար կարիք ունեն վեր հանող հարցերի: Հետաքրքրությունն ավելի քիչ է արտահայտված:

Մտավոր խնդիրներ ունեցող երեխաներն ունակ են հասկանալու անհեթեթությունը ավելի մեծ տարիքում (8 - 9 տարեկանում), բայց նույնիսկ հասկացման դեպքում չեն դրսևորում հուզական արձագանք՝ սահմանափակվելով տեսածի թվարկումով: Նրանք կարիք ունեն մշտական ուղղորդման «Իսկ էլ ինչը այն չէ» տիպի հարցերի միջոցով:

Այս նկարները կարող են կիրառվել լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ: Դրանք կարելի է կիրառել նաև սենսորային ալալիայի ժամանակ, քանի որ այս առաջադրանքը չի պահանջում խոսքային հրահանգ [7]:

Առարկաների (պատկերների) դասակարգում մեթոդիկայի կիրառման նպատակը ընդհանրացման և վերացարկման գործընթացների բնույթի որոշումն է, օբյեկտների խմբավորման ունակությունը՝ հիմնված էական հատկանիշների հիման վրա, գործողությունների մտածվածությունը, տրամաբանական կապեր հաստատելու կարողությունը, ուշադրության կայունությունն ու ծավալը, աշխատունակությունը:



նկար 26

Նկարագրություն. Երեխաներին ներկայացնում են քարտերի խումբ,

որոնցից յուրաքանչյուրի վրա պատկերված է մեկական առարկա: Տրվում է հրահանգ. «Դասավորիր քարտերը ըստ խմբերի» (նկ. 26):

Անհրաժեշտ է հասկանալ՝ ինչն է երեխան դնում խմբավորման հիմքում և ինչպիսի բառով է նա նշանակում առարկաների այս կամ այն խումբը: Ապա տալիս են հաջորդ հրահանգը. «Արա՛յ այնպես, որ խմբերը դառնան ավելի քիչ: Ասա՛, թե որ խմբերը կարող են միավորվել և ինչպես անվանվել»: Կարևոր է պարզել, թե ինչպիսի հատկանիշներ է երեխան դնում նոր միավորման հիմքում (էական, պատահական, արտաքին և այլն):

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Նորմալ մտավոր զարգացում ունեցող երեխաները 7 – 9 տարեկանում, մեծահասակի կողմից նվազագույն օգնության դեպքում, համեմատաբար հեշտ են տեղափոխվում իրավիճակային միավորումներից դեպի էական հատկանիշների վրա հիմնված միավորումներին:

Հոգեկան զարգացման հապաղում ունեցող երեխաներն ունենում են դժվարություններ խմբերի ընդլայնման ժամանակ և աշխատանքի ընթացքում կարիք ունեն ուղղորդող միջամտությունների:

Մտավոր խնդիրներ ունեցող երեխաները, նույնիսկ ավելի մեծ տարիքում, խմբավորում են առարկաները՝ հիմնականում հիմնվելով իրավիճակային կամ պարզապես ակնառու հատկանիշների վրա: Նրանց տրվող օժանդակությունը քիչ ազդեցություն է թողնում [4]:

ԳԻՐ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիրն ու ընթերցանությունը խոսքային գործունեության ձևավորման բարդ ու բազմամակարդակ պրոցեսներ են, որոնց իրականացմանը մասնակցում են մի շարք վերլուծիչներ՝ խոսքաստղական, խոսքաշարժողական, տեսողական, տեսողատարածական, ընդհանուր շարժողական: Նրանց միջև գրի ու ընթերցանության պրոցեսում ձևավորվում է սերտ կապ ու փոխկապակցվածություն:

Գիրն ու ընթերցանությունը համակարգային ֆունկցիաներ են, ուստի այդ համակարգի որևէ օղակի կամ օղակների ոչ լիարժեք աշխատանքը բերում է ամբողջ համակարգի ոչ լիարժեք աշխատանքին: Գրի

ու ընթերցանության գործընթացներին գործնականում մասնակցում է ամբողջ գլխուղեղը:

Դիսգրաֆիան գրի գործընթացի մասնակի խանգարումն է, որը դրսևորվում է կայուն կրկնվող սխալներով և պայմանավորված է գրի համար պատասխանատու բարձրագույն հոգեկան ֆունկցիաների թերզարգացմամբ:

Դիսլեքսիան ընթերցանության գործընթացի մասնակի խանգարումն է, որը դրսևորվում է կայուն և կրկնվող սխալներով և պայմանավորված է ընթերցանության համար պատասխանատու բարձրագույն հոգեկան ֆունկցիաների թերզարգացմամբ:

Ռիսկի խումբը (ովքեր կարող են ունենալ գրի ու ընթերցանության խանգարումներ)

- ձախլիկները, որոնց սովորեցնում են կիրառել ձախի փոխարեն աջ ձեռքը,
- ԽԸԹ ունեցող երեխաները,
- մեկից ավելի լեզուներով հաղորդակցվող ընտանիքների երեխաները,
- հնչյունա-հնչյոթային թերզարգացում ունեցող երեխաները,
- երեխաները, ում ծնողները ձգտում են երեխաներին վաղ սովորեցնել կարդալ,
- երեխաները, ում նյարդաբանները ախտորոշել են մինիմալ ուղեղային դիսֆունկցիա, ուշադրության պակաս կամ հիպերակտիվություն, հոգեկան զարգացման հապաղում:

Խոսքային դժվարություններն են՝

- տառերի գրության աղավաղումը,
- գրաֆիկորեն մոտ տառերի փոխարինումը միմյանցով,
- հնչարտաբերությամբ մոտ հնչյունների փոխարինումը միմյանցով,
- բառի հնչյունատառային կառույցի աղավաղում (տառերի բացթողումներ, ավելացումներ, (վանկերի ավելացումներ ու բացթողումներ),
- նախադասության կառույցի աղավաղումը (բառերի մասերի առանձին գրում, բառերի միացում իրար),

- ագրամատիզմը (խոսքի քերականական կողմի խանգարում),
- հայելային գիրն ու ընթերցանությունը,
- նորմայից դանդաղ ընթերցումը,
- ընթերցածի իմաստի ոչ լիարժեք ընկալումը,
- տողից տող թռիչք կատարելը,
- հոլովական վերջավորությունների շփոթումը,
- առաջին ընթերցած տառերից բառի գուշակելը,
- վանկային փոխարինումները կամ բացթողումները,
- բառերի փոխարինումներն այլ բառերով,
- հնչողությամբ մոտ տառերի փոխարինումները:

Ոչ խոսքային դժվարություններն են՝

- ձևերի ու մեծությունների ոչ լիարժեք պատկերացումը,
- մարմնի աջ ու ձախ մասերը տարբերակելու դժվարությունները,
- հավասարակշռված (կոորդինացիոն) շարժումներ կատարելու դժվարությունները,
- ուշադրության պակասը, որը երբեմն ուղեկցվում է հիպերակտիվությամբ,
- ջեռքի մկանների բարձր կամ ցածր տոնուսը, որն ուղեկցվում է արագ հոգնածությամբ:

Մանկավարժահոգեբանական աշխատանքի հիմնական ուղղվածությունը.

Գրի և ընթերցանության խանգարումների հաղթահարման հիմնական միջոցներն ու մեթոդներն են.

- ականների զարգացմանն ուղղված վարժություններ,
- դիթմիկ-խոսքային վարժություններ,
- ձեռքերի համաչափ հայելային պատկերում (նմանակում),
- տեսողական թելադրություն (տես՝ Ի. Տ. Ֆեդորենկոյի մեթոդիկա),
- հնչոյքային ընկալմանը, վերլուծությանն ու համադրությանն ուղղված խաղեր ու վարժություններ,
- բարբառային խոսքի, շուտասելուկների, առակների, առածների կի-

րառում՝ արտաբերական ապարատի աշխատանքի բարելավման նպատակով,

- ինտելեկտուալ, զարգացնող բառախաղեր՝ անագրամմաներ (մի բառի տառերն օգտագործելով կազմել այլ բառեր), ռեբուսներ, կախարդական շղթա (գտնել բառի ասոցիատիվ զույգը, օրինակ՝ հիվանդություն-կարմիր խաչ, կով-կաթ, դրոշ-երկիր), բառային լաբիրինթ (խառը դասավորության տառերից կազմել բառեր), բառային մատրյոշկաներ (երկար բառից կազմել կարճ բառեր և դասավորել հերթականությամբ՝ ըստ տառերի քանակի) և այլն,
- բարձրաձայն ընթերցանություն,
- աշխատանք հատուկ վանկային, տառային աղյուսակներով,
- բառային աշխատանք՝ բոլոր անձանոթ բառերի բացատրությամբ,
- աշխատանք համակարգչով, որի դեպքում, թե՛ անընթեռնելի ձեռագրի հետ կապված խնդիրներն են հաղթահարվում, թե՛ նուրբ շարժունակության հետ կապված խնդիրները, որոնց պատճառով երեխան չի կարողանում բռնել գրիչ կամ մատիտ [19]:

ԿԱՐԴԱԼՈՒ ԵՎ ԳՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐ, ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տեսողական թելադրություն (Ի. Տ. Ֆեդորենկոյի մեթոդիկա)

Ի.Տ. Ֆեդորենկոյի մեթոդիկայով տեսողական թելադրությունների կիրառումը նպաստում է վարժ կարդալու հմտության ձևավորմանը, ուշադրության, տեսողական և օպերատիվ հիշողության զարգացմանը, ուղղագրական սխալներ թույլ տալու հավանականության նվազեցմանը:

Ավելի արդյունավետ է տեսողական թելադրություններ գրելը սկսել հենց առաջին դասարանից, երբ ուսուցչի առաջ խնդիր է դրված սովորողների մոտ ձևավորել կարդալու հմտությունը:

Տեսողական թելադրությունների անցկացման մեթոդիկայի էությունը կայանում է հետևյալում.

Թելադրության նյութն իր մեջ ներառում է 18 հավաքածու՝ 6-ական

նախադասությամբ: Յուրահատկությունը հետևյալն է. եթե առաջին նախադասությունը պարունակում է ընդամենը 2 բառ՝ 8 տառ, ապա վերջին՝ 18-րդ հավաքածուն պարունակում է 46 տառ: Նախադասության երկարության աճը կատարվում է աստիճանաբար՝ 1 կամ 2 տառով: Բոլոր 18 հավաքածուների հետ աշխատանքը տևում է մոտ երկու ամիս: Այսպիսով, երկու ամսում օպերատիվ հիշողությունը այնքանով է զարգանում, որ սովորողը կարողանում է հիշել 46 տառից, այսինքն 8-9 բառից կազմված նախադասությունը:

Էկրանին ցույց է տրվում որևէ հավաքածուից 1 նախադասություն, իսկ մնացած 5-ը փակված է լինում: Այնուհետև հաջորդաբար ցուցադրվում են մյուս նախադասությունները, և երեխան պետք է սահմանված ժամանակահատվածում (այն տրված է աղյուսակում՝ վայրկյաններով) մտքում կարդա և փորձի մտապահել այն: Ժամանակի ավարտից հետո նախադասությունը փակվում է, և երեխան գրում է այն տեսողական թելադրությունների համար նախատեսված տետրում:

Երբ երեխան գրում է առաջին նախադասությունը, ապա ցույց ենք տալիս երկրորդը: Սահմանված ժամանակի ավարտից հետո երեխան գրում է նաև դա: Այնուհետև նույն սկզբունքով գրում են հավաքածուի բոլոր նախադասությունները [20]: Այս ամբողջի համար երեխան ծախսում է մոտավորապես 5-8 րոպե ժամանակ: Թելադրությունները գրում են տետրերում, քանի որ աշխատանքը տարվում է մի քանի օր, մինչև որ երեխան սկսի հեշտությամբ կատարել առաջադրանքը:

Տեսողական թելադրություններ պետք է գրել ամեն օր: Եթե չի պահպանվում այս պայմանը, ապա աշխատանքը դառնում է անարդյունավետ և հնարավոր չէ հասնել ի սկզբանե դրված նպատակին:

Ստորև ներկայացված է Ի.Տ. Ֆեդերենկոյի մեթոդիկայի հիման վրա կազմված տեքստերի 1 ամբողջական հավաքածու [21]:

Թելադրություն 1

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Բակը մեծ է:	8	4
2	Հավը թռավ:	8	4
3	Շունը փախավ:	9	4
4	Անին երգեց:	9	4
5	Արան քնեց:	8	4
6	Ես հեռացա:	8	4

Թելադրություն 2

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Գետը վարար է:	10	5
2	Կաթը սպիտակ է:	11	5
3	Տորթը քաղցր է:	11	5
4	Ծիտը ծվլում է:	11	5
5	Ծառը ծաղկել է:	11	5
6	Խոտը կանաչ է:	10	5

Թելադրություն 3

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Տղան դաս է անում:	12	6
2	Անձրևը թափվեց:	12	6
3	Կովը խոտ կերավ:	12	6
4	Հատակը փայլեց:	12	6
5	Արևը տաքացրեց:	12	6
6	Արջը մեղր կերավ:	13	6

Թելադրություն 4

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Արծաթը մետաղ է:	12	6
2	Կատուն մուկ է ուտում:	13	6
3	Կյանքն անգին է:	12	6
4	Արան ջրեց ծաղիկը:	14	6
5	Ժամանակը ոսկի է:	13	6
6	Ճաշը տաքացել է:	12	6

Թելադրություն 5

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Առածը խոսքի աղն է:	14	7
2	Բուն վայրի թոչուն է:	14	7
3	Կարիճը թունավոր է:	14	7
4	Ջայլամը ծու է ածում:	14	7
5	Ձուկը ջրում է ապրում:	14	7
6	Դեղահաբը դառն է:	13	7

Թելադրություն 6

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Մարդը երկու աչք ունի:	15	8
2	Նստարանը փայտից է:	15	8
3	Ջուրն ընկածը կթրջվի:	16	8
4	Կինը հարյուր սիրտ ունի:	17	8
5	Կատաղած կատուն մլավեց:	18	8
6	Կրիան դանդաղաշարժ էր:	18	8

Թելադրություն 7

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Դուռը բացվել էր քամուց:	17	6
2	Սուր մատիտը կոտրվեց:	16	6
3	Պաղպաղակը հալվել էր:	17	6
4	Ջրի բերածը քամին կտանի:	19	6
5	Բուին աչք տվին, հոնք էլ ուզեց:	21	6
6	Աշնանը տերևները թափվեցին:	22	6

Թելադրություն 8

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Լավ հովիվը չորս աչք ունի:	19	6
2	Շանը տեսավ, փայտը հիշեց:	19	6
3	Էշն ինչ իմանա նուշն ինչ է:	19	6
4	Ճաղատի մոտ սանր չի գտնվի:	20	6
5	Աշխարհն աղով, աղն էլ համով:	21	6
6	Հայի վերջին խելքն է գովելի:	22	6

Թելադրություն 9

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Գժի համար ամեն օր զատիկ է:	20	5
2	Զատիկի տոնի ծու ենք ներկում:	20	5
3	Ժողովրդական երգ ենք երգում:	22	5
4	Պարում ենք հայկական պարեր:	21	5
5	Զատիկի ծեսին ծուկ ենք տապակում:	23	5
6	Նվագում ենք դիոլ, զուռնա, սագ:	21	5

Թելադրություն 10

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Վերքը լավանում է, սպին՝ մնում:	21	4
2	Բակում շատ երեխաներ կային:	21	4
3	Ամեն թռչուն իր բույնն է գոլում:	22	4
4	Աղամանդը ցեխի մեջ էլ կփայլի:	23	5
5	Այդ ծաղիկներն անուշ հոտ ունեն:	23	5
6	Ես նոր եմ սկսել լողալ սովորել:	24	5

Թելադրություն 11

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Հիմարը խոսում է, խելոքը լռում է:	23	5
2	Աղվեսն իր պոչին վկա էր բերում:	23	5
3	Ամեն անգամ գետը գերան չի բերի:	24	5
4	Մուգ երկնքում փայլում են աստղերը:	25	5
5	Անգետիկն օդում ուրախ երգում էր:	23	5
6	Ձուն գողացողը ձին էլ կգողանա:	23	5

Թելադրություն 12

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Տղան կորցրել էի իր սիրելի շանը:	25	4
2	Աղամանդն աղբանոցում էլ կփայլի:	25	4

3	Արտը խախուտ է, մահանան կարկուտն է:	24	4
4	Անձրևից հետո շողաց պայծառ արևը:	24	4
5	Ձյան տակից երևում էր ձնծաղիկը:	24	4
6	Անտառի բույսերը փնտրում էին արևին:	27	7

Թելադրություն 13

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Նա մոռացել էր առաջադրանքների տետրը:	30	5
2	Նա փնտրում էր իր լավագույն ընկերներին:	30	5
3	Կայարանում կանգ առավ մարդատար գնացքը:	31	6
4	Հերոսը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:	33	6
5	Եթե չչտապես, ձվից դուրս եկած ճուտը կտեսնես:	33	6
6	Անձրևի խոշոր կաթիլներն ընկան երկրի վրա:	33	6

Թելադրություն 14

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Ժլատ մարդիկ բարեկամներ չեն ունենա:	28	5
2	Զվարճալի կապիկներն անընդհատ պարում էին:	33	6
3	Հանկարծ նապաստակի բեղերը շարժվեցին:	31	6
4	Ծաղիկները դանդաղ արթնացան ձմռային քնից:	35	6
5	Ամպերից ազատված արևն իր շողերը տարածեց երկրի վրա:	41	7

6	Եթե գործը վաղվան մնաց, իմացիր որ կորավ գնաց:	35	5
---	--	----	---

Թելադրություն 15

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Նապաստակները քնել էին վայրի մասրենու թփի տակ:	37	6
2	Երբ ճյուղ ես նկարում, պետք է լսես քամու շունչը:	33	5
3	Բարին որ չլիներ, չարն աշխարհը կքանդեր:	31	5
4	Կապույտ ծովի վրա լողում էր նավակը:	27	4
5	Կենդանաբանական այգու կապիկը որոշել էր ճամփորդել:	41	7
6	Իր ընկերների հետ միասին նա զարդարեց օդապարիկը:	39	5

Թելադրություն 16

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Երկինքը մթնեց, և անձրևն ուժգնությամբ թափվեց:	35	5
2	Նա հաղթեց երիտասարդ նկարիչների մրցույթում:	35	5
3	Ձիերին էին պայտում գորտերը թաթերը մեկնեցին:	36	5
4	Երկու նապաստակի ետևից ընկնողը ոչ մեկին չի բռնի:	38	6
5	Նա շտապում էր հասնել տուն, որտեղ իրեն էին սպասում ծնողները:	44	6
6	Կուզեի իմանալ, թե երկնքի աստղերը ինչու են փայլում:	38	6

Թելադրություն 17

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Աչքերը գնում են տեսնելու այն, ինչ ականջները լսել են:	40	6
2	Խոսքերը միայն խանգարում են իրար լավ հասկանալուն:	39	6
3	Ամենակարևորը հնարավոր չէ տեսնել միայն աչքով:	38	6
4	Անտառի մեջ՝ ինչ-որ տեղերում, աղբյուրներ են թաքնված:	39	6
5	Արևը չորացրել էր վացքը ու փաթաթել պարանին:	35	5
6	Նա կարդացել է պահարանի բոլոր գրքերը, բացի այդ մեկից:	42	6

Թելադրություն 18

№	Տեքստ	Տառերի քանակ	Ցուցադրման ժամանակահատված (վայրկյան)
1	Մենք բոլորս գալիս ենք հեքիաթից և մեր մանկությունից:	41	5
2	Անգետիկը խնդրեց, որ իրեն էլ վերցնեն ճամփորդության:	41	5
3	Առավոտյան հենց արթնանաս, կարգի կբերես քո մոլորակը:	42	5
4	Երբ մարդը շատ է ուզում սրամտել, ակամայից մի սխալ բան է ասում:	45	6
5	Ճանապարհը շատ երկար էր, սակայն աղբյուրը երբեք չէր հոգնում:	46	6

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽԱՂԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

Խաղ «Հետաքրքրասիրություն»

Նպատակ. Թուլացնել երեխաների մտավոր և ֆիզիկական լարվածությունը, ինչպես նաև զարգացնել տառի գրաֆիկական պատկերի ընկալումը:

Ուղեցույց. Խմբավարը պարապմունքի ավարտից հետո ասում է. «Նախքան դուք կգնաք տուն, ես ուզում եմ ձեզնից յուրաքանչյուրին նվիրել տառեր: Ես ձեր անվան տառերի միջից կընտրեմ որևէ մեկը և մատով կնկարեմ այն ձեր ձեռքի մեջ կամ՝ մեջքին: Դուք պետք է ասեք, թե որ տառն եմ նկարել: Ձեզանից յուրաքանչյուրը հերթով թող մոտենա ինձ, որպեսզի ես կարողանամ այդպես բոլորին հրաժեշտ տալ»:

Խաղ «Արագ կողմնորոշվիր»

Նպատակ. Զարգացնել երեխայի բառ կազմելու, տարածության մեջ կողմնորոշվելու, թիմով աշխատելու կարողությունը, տեսողական ընկալումը, խոշոր մոտորիկան:

Ուղեցույց. Խաղավարը մասնակիցներին բաժանում է երկու խմբի: Յուրաքանչյուր երեխայի տալիս է ինքնաստոնձվող թղթի վրա գրված մեկ տառ, որը փակցվում է երեխայի հագուստին: Երկու խմբին էլ տրվում են միևնույն տառերը, օրինակ՝ Վ, Ա, Շ, Ու, Ն, Գ, Դ, Ր: Դրանցով կարելի է շատ բառեր կազմել: Խաղավարն ասում է որևէ բառ, օր.՝ վարունգ, իսկ մասնակիցները բառը լսելուց հետո պետք է անմիջապես կանգնեն իրար կողք այնպես, որ կարդացվի նշված բառը: Հաղթող կճանաչվի այն խումբը, որն արագ և ճիշտ կկազմի բառերը:

Խաղ «Գտիր թաքնված բառը»

Նպատակ. Զարգացնել երեխայի ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը, բառն ամբողջական ընկալելու կարողությունը:

Ուղեցույց. Երեխային տրվում են խառը դասավորված տառեր, այդ տառերի շարքից երեխան պետք է գտնի ու ընդգծի առաջարկվող բառը:

Օրինակ՝ ծաղիկ:

ծվբժաղիկնըգ

ակօքիղզճաղիկ
ղճաղիկդիկյահնծխ
լտճահգիկճաղիկ

Խաղ «Լռություն»

Նպատակ. Զարգացնել գրավոր խոսքը, ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ. կապույտ և կարմիր շրջանաձև քարտեր:

Ուղեցույց. Այս խաղի ժամանակ ոչ ոք իրավունք չունի խոսելու, անգամ խաղավարը: Գրատախտակին գրվում են ուղղագրական արժեք ունեցող բառեր՝ բաց թողնված տառերով: Խաղավարը ժեստերի միջոցով կանչում է աշակերտներից մեկին գրատախտակի մոտ: Նա գունավոր կավիճով լրացնում է բաց թողած տառը: Եթե ճիշտ է երեխան, ապա խաղավարը ցույց են տալիս կապույտ շրջանը, եթե սխալ է, խաղավարը հրավիրում է մեկ այլ երեխայի սխալն ուղղելու համար: Խաղը մեծ ոգևորություն է առաջացնում երեխաների մոտ, նրանք ստանձնում են «ստուգողի» պատասխանատվություն:

Խաղ «Սխալներ»

Նպատակ. Զարգացնել ուշադրությունը կենտրոնացնելու, նախադասության իմաստն ընկալելու կարողությունը:

Ուղեցույց. Խաղի մասնակիցները շրջան են կազմում: Խաղավարը նախադասություն է ասում, որոնց մեջ կան սխալներ:

Սխալ նախադասությունների օրինակներ.

- Ամռանը ցուրտ է:
- Ձմռանը ծառերի վրա մրգեր են աճում:
- Թռչունները ձմռանը հետ են գալիս տաք երկրներից:
- Մարդիկ թրջվել էին արևի պատճառով:
- Կենդանիները ձմռանը երամ են կազմում:
- Պաղպաղակը հալվել էր սառույցից:

Նախադասությունները յուրաքանչյուր խաղի մասնակցի առաջարկվում են հերթականությամբ: Նա, ով նախադասության մեջ սխալ չգտնի, դուրս է գալիս խաղից: Այս դեպքում նույն առաջադրանքը առա-

ջարկվում է հաջորդ խաղացողին: Հաղթում է նա, ով վերջում է մնում:

Խաղ «Քանդված նախադասություններ»

Նպատակ. Զարգացնել խոսքը շարահյուսորեն ճիշտ կառուցելու կարողությունը:

Ուղեցույց. Խաղավարը տալիս է խմբերին «քանդված նախադասությամբ» բառերը: Երեխաները արագ պետք է ճիշտ դասավորեն նախադասության բառերը՝ կանգնելով ճիշտ տեղում: Հաղթում է այն խումբը, որի «նախադասության անդամները» ամենաարագն են կողմնորոշվում ու ճիշտ տեղում կանգնում:

Նախադասության օրինակներ.

- *Սրանալով, ձեռք, բերում, են, գիտելիք, կրթություն:*
- *Երկնքում, արևը, պայծառ, էր, շողում, պարզ:*
- *Բարակ, անում, էր, աղջիկը, հյուսք, թելերով:*
- *Զգեստը, մայրիկը, գեղեցիկ, արդուկեց:*

Խաղ «Հետադարձ նկարչություն»

Նպատակ. Զարգացնել մանր շարժունակությունը, գրավոր խոսքը:

Ուղեցույց. Երեխաներից մեկն անշարժ բռնում է մատիտը և ամուր սեղմում այն ստվարաթղթին, իսկ մյուսը շարժում է ստվարաթուղթը մատիտի տակ, որպեսզի ստացվի նկար: Սկզբում դրանք պետք է լինեն հասարակ պատկերներ՝ երկու զուգահեռ գծեր, խաչ, եռանկյուն, քառակուսի, օվալ, շրջան, իսկ հետո տառեր, առարկաների ուրվագծեր, կենդանիներ և այլն:

Խաղ «Որոնողական բառային աղյուսակներ»

Նպատակ. Զարգացնել ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունը, բառային հիշողությունը, գրավոր խոսքը:

Ուղեցույց. Որոշակի ժամանակ է տրվում երեխային աղյուսակը նայելու՝ «լուսանկարելու» համար, հետո խաղավարը երեխայից վերցնում է աղյուսակը ու ասում է բառեր, երեխան պետք է ասի այդ բառերը կան աղյուսակում, թե՛ ոչ:

Աղյուսակի օրինակ.

Վանկային ընթերցանության հետազոտություն

«Կարդա՛ վանկը», «Կարդա՛ այն վանկը, որը ցույց կտամ» կամ
«Ցույց տու՛ր այն վանկը, որը կկարդամ»:

սա	հի	ջու
սի	նո	կո
գա	դու	հա
մա	նո	բա
մի	փո	կու
շու	ծա	մի
լի	րա	լա
վո	չա	ֆի

ան	օն	օլ
ավ	ուդ	ահ
ամ	օկ	աբ
իմ	էջ	ուկ
ուշ	աձ	իշ
իլ	ար	ալ
ով	աչ	իֆ
ուգ	աճ	էն

սաբ	հիչ	ջուկ
սիհ	նոշ	կոճ
գան	դուկ	հան
մար	նոխ	բակ
միվ	փող	կուս
շուվ	ծախ	միս
լին	րակ	լավ
վոկ	չակ	ֆիվ

անի	օնի	օլո
ավո	ուդե	ահա

ամո	օկե	արի
իմա	էջի	ուկու
ուշի	ածա	իշա
իլի	արու	ալա
ովա	աչո	իֆի
ուգա	աճի	էնե

Հնչյունահնչյթային վերլուծություն

1. Գտիր 4-րդ ավելորդը.

բ, գ, բ, բ
ա, ու, ի, ս
ն, ն, մ, ն
շ, ս, շ, շ
զ, ժ, գ, գ
դ, խ, դ, դ
ծ, ծ, ծ, ծ

2. Գտիր ավելորդ բառը.

Ուսուցիչ, ցնցուղ, կրիչ
Մարգանք, ժավել, զատիկ
Կրակ, կարագ, մարտ
Բառ, վերելակ, տառ
Հարց, ծագ, ծուկ:

3. Անվանիր այն հնչյունը, որը՝

- 3-րդ տեղում է
- 6-րդ տեղում է
- 3-րդ հնչյունից հետո է
- 3-րդ հնչյունից առաջ է

Բառեր՝ պահարան, հեռուստացույց, համակարգիչ, դարբին, գիրք, հեռախոս, բամբակ[23]:

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՒԹԵՐԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ.
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՓԱԹԵԹ**

**ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՈՒՆԵՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՎԵՐՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ**

Մանկավարժահոգեբանական գնահատում և աջակցություն իրականացնելու նպատակով մասնագետները երեխայի հաստատություն ընդունվելու պահից սկսած կազմակերպում են դիտարկման գործընթացը, որը կարող է տևել 3-6 շաբաթ: Դիտարկում կարող է իրականացնել ցանկացած մասնագետ, ով աշխատում է, շփվում է տվյալ երեխայի հետ: Մեթոդի առավելությունն այն է, որ անցկացման համար չեն պահանջվում հատուկ պայմաններ, երեխան լրացուցիչ չի ծանրաբեռնվում:

Ինչի համար է պետք դիտարկումը.

Երեխայի դիտարկումը անհրաժեշտ է նրա ուժեղ կողմերը, հմտությունները, կարողություններն ու ունակությունները բացահայտելու, լրացուցիչ աջակցությունների տեսակները պարզելու, ինչպես նաև, երեխայի համապատասխան ուսումնառությունը պլանավորելու համար:

Դիտարկումը կազմակերպվում է երեխայի բնական միջավայրում, գործունեության բոլոր ձևերում՝ ուսումնական, խաղային, աշխատանքային:

Դիտարկողը պետք է պահպանի հետևյալ կանոնները՝

- լինի անաչառ, անկողմնակալ,
- նստի դասարանի վերջում կամ խաղասենյակի մի անկյունում,
- չխոսի, չմիջամտի երեխայի ինքնուրույն խաղին,
- բացահայտի ոլորտները, որոնք ունեն զարգացման կարիք,
- կատարի գրառումներ:

Դիտարկման աշխատանքները պետք է նախօրոք պլանավորված և նպատակաուղղված լինեն (ինչ և ինչի համար ենք դիտարկում):

Դիտարկման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝

- երեխայի ակտիվությանն ու մասնակցությանը գործունեության բոլոր ձևերում,
- կարգ ու կանոնին ենթարկվելու կարողությանը,
- իրեն տրված հրահանգները, հանձնարարություններն ընկալելու կարողությանը,
- աշխատելու տեմպին,
- ուշադրությունը կենտրոնացնելու կարողությանը,
- խմբում աշխատելու, սովորողների հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությանը, վարքին:

Դիտարկման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել նաև.

- ով է սովորողը,
- ինչ հետաքրքրություններ կամ հատուկ ձիրք ունի,
- որոնք են սովորողի ուժեղ կողմերը,
- ո՞րն է նրա զարգացման, հմտությունների, կարողությունների և գիտելիքների առկա մակարդակը,
- որոնք են սովորողի դժվարություններն ու կարիքները,
- ովքեր են սովորողի ընկերները,
- ո՞վ դեր ունի սովորողի կենսագործունեության ասպարեզում,
- ինչ է անհրաժեշտ սովորողին դասարանում, տանը, շրջապատում հետագա զարգացման և անկախ լինելու համար:

Դիտարկման գործընթացին անհրաժեշտ է նաև մասնակից դարձնել երեխայի ծնողին, ստեղծել նրա հետ փոխադարձ վստահության դաշտ, խուսափել դաստիարակության քննադատական ձևերից ու մեթոդներից, հստակ պատկերացում տալ ծնողին երեխայի զարգացման մակարդակի վերաբերյալ, ծնողների մոտ ձևավորվել իրատեսական պատկերացումներ երեխայի խնդրի և սպասվելիք արդյունքների վերաբերյալ:

Դիտարկման արդյունքները գրառվում են և ամփոփվում «Դիտարկման արդյունքների ամփոփաթեթ» ձևաթղթում, որին հաջորդում է գնահատման գործընթացը [24]:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Երեխայի անուն, ազգանուն՝ _____

Ծննդյան ամսաթիվ՝ ____/____/____թ.

Հաստատություն՝ _____

1. Տեղեկություններ երեխայի ընդհանուր ֆիզիկական վիճակի մասին.

Ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները _____

Հոգնելիությունը ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում _____

2. Շարժողական ոլորտ.

ա) խոշոր շարժունակություն _____

բ) մանր/նուրբ շարժունակություն _____

3. Իմացական ոլորտ.

ա) ընկալում _____

բ) ուշադրություն _____

գ) հիշողություն _____

դ) մտածողություն _____

4. Կարդալու, գրելու հմտություններ _____

5. Մաթեմատիկական հմտություններ _____

6. Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում _____

7. Հուզականային ոլորտ _____

8. Ինքնասպասարկում և սոցիալական հմտություններ.

ա) ինքնուրույն ուսելու, հագնվելու, կարիքները հոգալու կարողություններ _____

բ) տեղեկություններ շրջապատի և իր մասին _____

գ) հասակակիցների և մեծահասակների հետ շփումը, խաղային, աշխատանքային գործունեությունը_____

9. Այլ նշումներ_____

10. Եզրակացություն_____

Դիտարկողների անուն, ազգանուն, պաշտոն՝_____

Լրացման ամսաթիվ՝ _____/_____/_____.թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՄԻՏՎԱԾ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆԸ

Երեխայի մանկավարժահոգեբանական գնահատման նպատակն է դիտարկման և մշտադիտարկման արդյունքում սահմանել երեխայի կրթական կամ զարգացման խնդրի աստիճանը, որն էլ հնարավորություն կտա հաստատության կողմից մատուցվող ծառայությունների որակը բարելավելով՝ բարձրացնել կրթության արդյունավետությունը: Այլ կերպ ասած՝ գնահատման արդյունքում աջակցությունը և միջամտությունը նպաստում են կրթական գործունեության բարելավմանը, աջակցության ծառայությունների ճիշտ կազմակերպմանը:

Վերոհիշյալ գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար կարելի է կիրառել «Մանկավարժահոգեբանական հետազոտման գործիքը»:

Գործիքը կիրառվում է հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից՝ բացահայտելու երեխայի խնդիրը համապատասխան ոլորտում, ինչպես նաև կարողությունների մակարդակը: Այն կարելի է կիրառել 2 անգամ. առաջին անգամ որոշելու վերը նշվածը, իսկ երկրորդ անգամ աջակցությունները մատուցելուց հետո պարզելու՝ արդյո՞ք խնդիրը երեխայի մոտ վերացել է, թե ոչ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Երեխայի անուն, ազգանուն՝ _____

Ծննդյան ամսաթիվ՝ ____/____/____թ.

Հաստատություն՝ _____

Լրացման ամսաթիվ՝ ____/____/____թ.

Ներկա վիճակի հակիրճ ամփոփում.

Այստեղ կարող եք նշել ներկա իրավիճակի նկարագրությունը
(Ի՞նչն է դժվար այս պահին: Ո՞րն է հատուկ և հրն է այս պահի
ամենակարևոր խնդիրը):

Խնդրում ենք յուրաքանչյուր ոլորտի համար X նշանով գնահատել երեխայի ուժեղ կողմերը և դժվարությունները (վանդակները թույլ կտան գնահատել երեխայի կարողությունների մակարդակը, ընդ որում՝ վերևից և ներքևից հաշված 3-րդ վանդակի վրա նշումը կնշանակի կարողությունների միջին մակարդակ):

Ուժեղ  Թույլ	Նշումների համար (Քառերը կարող են կարևոր լինել, հայր-կապես ընդգծվածները)	Տրամաբանություն և մտածողություն Կարողանում է համեմատել, հետազոտել երևույթները, առարկաները, գտնում է տարբեր խնդիրների լուծումները, օրինաչափությունները, հասկանում է իրադարձությունների հաջորդականությունը և պատճառահետևանքային կապերը, կատարում է քննադատական վերլուծություն:
Ուժեղ  Թույլ		Ուշադրություն Երեխան դրսևորում է ուշադրության տեղափոխելիություն, կենտրոնացում և պահպանում: Կարողանում է ուշադրությունը կենտրոնացած պահել որոշակի գործունեության ընթացքում, տեղափոխել այն գործունեության մի տեսակից մյուսին: Կարողանում է ընդհատել գործունեությունը, կատարել այլ գործողություն և այնուհետև վերադառնալ և շարունակել գործունեությունը:
Ուժեղ  Թույլ		Հիշողություն Երեխան կարողանում է մտապահել և վերարտադրել որոշակի տեղեկատվություն. հիշում է թվերը, փաստերը, նկարագրությունները: Վերարտադրում է պատմվածքներ, պատմում է իր հետ կատարված իրադարձությունները:

Ուժեղ  Թույլ		Կարդալ Երեխան հասկանում է բառերի և սիմվոլների նշանակությունը, կարողանում է կարդալ և ամբողջությամբ հասկանալ ու հիշել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ (գրքեր, թերթեր և այլն) խելամիտ ժամանակահատվածում:
Ուժեղ  Թույլ		Գրել Երեխան տիրապետում է գրավոր խոսքին, որը ներառում է ուղղագրությունը, քերականությունը և գրավոր հաղորդակցման ամբողջականությունը՝ խելամիտ ժամանակահատվածում: Կարողանում է ընթերնելի գրել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ՝ մտքերն արտահայտելու համար:
Ուժեղ  Թույլ		Մաթեմատիկական գիտելիքներ Երեխան ունի գիտելիքներ մեծության, չափի և ձևի մասին, գիտի հաշվել, կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ, դասակարգել չափսերը և օգտագործել տարբեր չափման միավորներ:

Ուժեղ  Թույլ		Խոսք Երեխան կարող է հասկանալ և արտահայտել բանավոր ու ոչ խոսքային հաղորդագրություններ, կառուցել ճիշտ նախադասություններ՝ իր տարիքին համապատասխան բառապաշարով, խոսել գրագետ: Կարողանում է սկսել, շարունակել և ավարտել երկխոսությունը, բանավիճել և օգտագործել փաստարկներ՝ իր կարծիքը պաշտպանելու համար:
Ուժեղ  Թույլ		Խոշոր շարժունակություն Երեխան դրսևորում է խոշոր մոտորիկայի ընդհանուր կարողություններ, պահում է հավասարակշռությունը քայլելիս, վազելիս, ցատկելիս, մագլցելիս, աստիճաններով բարձրանալիս և իջնելիս: Խոշոր առարկաներ բռնելու, նետելու ժամանակ դրսևորում է կորդինացիոն կարողություններ:
Ուժեղ  Թույլ		Մաթեմատիկական գիտելիքներ Երեխան ունի գիտելիքներ մեծության, չափի և ձևի մասին, գիտի հաշվել, կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ, դասակարգել չափսերը և օգտագործել տարբեր չափման միավորներ:

Ուժեղ  Թույլ		Մաթեմատիկական գիտելիքներ Երեխան ունի գիտելիքներ մեծության, չափի և ձևի մասին, գիտի հաշվել, կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ, դասակարգել չափսերը և օգտագործել տարբեր չափման միավորներ:
Ուժեղ  Թույլ		Մաթեմատիկական գիտելիքներ Երեխան ունի գիտելիքներ մեծության, չափի և ձևի մասին, գիտի հաշվել, կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ, դասակարգել չափսերը և օգտագործել տարբեր չափման միավորներ:
Ուժեղ  Թույլ		Մաթեմատիկական գիտելիքներ Երեխան ունի գիտելիքներ մեծության, չափի և ձևի մասին, գիտի հաշվել, կողմնորոշվել տարածության, ժամանակի մեջ, դասակարգել չափսերը և օգտագործել տարբեր չափման միավորներ:

Ստորագրություններ՝

Ժնող՝ _____

ՄՀ աջակցության թիմ՝ _____

պաշտոն

ստորագրություն

անուն, ազգանուն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԵՐԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՄ՝ ԸՍՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Ինչ է իրենից ներկայացնում մանկավարժահոգեբանական աջակցությունը

Առօրյա կյանքում, ուսման և գործունեության այլ բնագավառներում երեխայի ակտիվությունն ու մասնակցությունը բարձրացնելու համար աջակցությունը պետք է ուղղված լինի.

- Երեխայի ուսուցման, դաստիարակության, սոցիալական ադապտացիայի օպտիմալ պայմանների և հարմարեցումների ստեղծմանը:
- Միասնական կրթական միջավայրի ապահովմանը:
- Երեխաների պոտենցիալ հնարավորությունների զարգացմանը միասնական գործունեության ընթացքում:
- Երեխայի կյանքի կարևորագույն փորձի, իմացական խոսքի, շարժողական ոլորտների, սոցիալական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:
- Ուսումնական գործունեության ընթացքում զարգացնող աշխատանքների արդյունավետության ապահովմանը:
- Բացասական դրսևորումների (հուզական, վարքային) հաղթահարմանը:
- Դրական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառների բարձրացմանը:
- Երեխաների նյարդային և հոգեկան վիճակների պահպանմանն ու ամրապնդմանը:
- Երեխաների սոցիալական և մասնագիտական ուղղորդմանը:
- Երեխայի դաստիարակության և զարգացման գործում ընտանիքի դերի կարևորմանը:
- Համապատասխան գրականության, անհատական, ուսումնական, տեխնիկական միջոցների, դիդակտիկ նյութերի ստեղծմանը:
- Անհատական զարգացման ծրագրերի ապահովմանը:

Կրթության մեջ դժվարություն ունեցող երեխային, անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի նաև աջակցման այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են հոգեբանական, լոգոպեդական, հատուկ մանկավարժական, վերականգնողական ծառայությունները: Ելնելով երեխայի զարգացման առանձնահատկություններից՝ կարող են տրա-

մադրվել համապատասխան հարմարեցումներ, ինչպես միջավայրային, այնպես էլ մեթոդական: Ցանկացած դժվարություն, որի առաջ կանգնում է երեխան, հնարավոր է հաղթահարել միայն այն դեպքում, երբ համագործակցում են բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն կերպ կապ ունեն երեխայի հետ, հատկապես կարևորվում է ծնողի դերը:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են ըստ «Անհատական զարգացման ծրագրի», որտեղ նշվում են այն ոլորտները, որոնցում երեխան ունի դժվարություններ և որոնք պետք է զարգացնել: «Անհատական զարգացման ծրագիրը» բաղկացած է 13 բաժնից, որոնք համապատասխանում են «Մանկավարժահոգեբանական հետազոտման գործիքի» բաժիններին: Եթե «Մանկավարժահոգեբանական հետազոտման գործիքը» կիրառելիս որևէ բաժնում հանգում ենք միջինից ցածր, այսինքն՝ թույլ կարողության, ապա «Անհատական զարգացման ծրագրի» համապատասխան բաժնի համար դրվում են նպատակներ, նպատակին հասնող փոքրիկ քայլեր, մշակվում են ռազմավարություններ և մեթոդներ:

«Անհատական զարգացման ծրագրի» նպատակները պետք է սահմանվեն SMART ձևաչափով (S-Specific, M-Measurable, A-USE Action Words, R-Realistic and relevant, T-Time limited), ինչը նշանակում է, որ նպատակը պետք է լինի կոնկրետ, չափելի, գործողություն ցույց տվող բառերով սահմանված, իրատեսական և ժամանակային առումով սահմանափակված:

SMART ձևաչափով սահմանված նպատակների օրինակներ.

- *Տարեվերջին Կարենը կկարողանա վերարտադրել առավելագույնը 10 պարզ նախադասությունից կազմված տեքստը՝ պահպանելով պարճառահետևանքային կապերը:*
- *Տարեվերջին Կարենը կկարողանա կարդալ կենցաղում առավել հաճախ օգտագործվող 20 բառ և համադրել դրանք նկարների հետ՝ թույլ տալով սխալ 10-ից 2 դեպքերում:*
- *Տարեվերջին Կարենը կմասնակցի 5-10րոպե տևողությամբ խմբային աշխատանքներին՝ ենթարկվելով հաստատված 3-4 կանոններին:*

«Անհատական զարգացման ծրագրի» նպատակներն ամփոփվում են Նվաճումներ բաժնում: Ծրագիրը կազմվում է 3-12 ամիսների համար:

Ստորև ներկայացնում ենք «Անհատական զարգացման ծրագրի ձևաթուղթը».

Երեխայի անուն, ազգանուն՝ _____

Ծննդյան ամսաթիվ՝ ____/____/____թ.

Հաստատություն՝ _____

Խնդրում ենք X նշանով գրառել այն ոլորտները, որոնցում երեխան ունի դժվարություններ /նշել բոլոր համապատասխան ոլորտները/.

Տրամաբանություն և մտածողություն		Խոսելու կարողություն	
Ուշադրություն		Խոշոր շարժունակություն	
Հիշողություն		Մանր շարժունակություն	
Կարդալու կարողություն		Ինքնասպասարկում	
Գրելու կարողություն		Փոխհարաբերություններ մարդկանց հետ	
Մաթեմատիկական գիտելիքներ		Հուզական և անձնային ոլորտ	
Հաղորդակցում			

Ծրագիրը կազմելու ամսաթիվ՝ _____

Վերանայման ամսաթիվ՝ _____

/ծրագիրը կազմվում է 6-12 ամիսների համար/

Հարուկ մանակավարժական ծառայություն <i>/օլիգոֆրենոմանկավարժ, քիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, լոգոպեդ/</i>						
Նպատակներ և քայլեր, որոնք ուղղված են աջակցություն պահանջող ոլորտի զարգացմանը	Ռազմավարություն /նյութեր, մեթոդներ, հնարներ, հարմարեցումներ/	Պատասխանատու /անուն, ազգանուն, պաշտոն/	Նվաճումներ			
			Այո	Ոչ	Մասամբ	Ամսաթիվ
Նպատակ 1						
1.1						
1.2						
Նպատակ 2						
2.1						
2.2						

Հոգեբանական ծառայություն						
Նպատակներ և քայլեր, որոնք ուղղված են աջակցություն պահանջող իշխողի զարգացմանը	Ռազմավարություն /նյութեր,մեթոդներ, հնարներ, հարմարեցումներ/	Պատասխանատու /անուն, ազգանուն, պաշտոն/	Նվաճումներ			
			Այո	Ոչ	Մասամբ	Ամսաթիվ
Նպատակ 1						
1.1						
1.2						
Նպատակ 2						
2.1						
2.2						
Սոցիալական մանկավարժի ծառայություն						
Նպատակներ և քայլեր, որոնք ուղղված են աջակցություն պահանջող իշխողի զարգացմանը	Ռազմավարություն /նյութեր,մեթոդներ, հնարներ, հարմարեցումներ/	Պատասխանատու /անուն, ազգանուն, պաշտոն/	Նվաճումներ			
			Այո	Ոչ	Մասամբ	Ամսաթիվ
Նպատակ 1						
1.1						
1.2						
Նպատակ 2						
2.1						
2.2						

Անհատական զարգացման ծրագիրը կազմող ՄՀ աջակցության թիմ՝

Ազգանուն, անուն	Պաշտոն	Ստորագրություն
1. _____	_____	_____
2. _____	_____	_____
3. _____	_____	_____

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Венгер Л.А., Выгодская Г.Л., Леонгард Э.И., – Ростов-на-Дону// Психологическое тестирование детей от рождения до 10 лет/О.Н. Истратова. – Ростов-на-Дону: Феникс, 2008. – С. 44-45.
2. Забрамная С.Д. От диагностики к развитию: Материалы для психолого-педагогического изучения детей в дошкольных учреждениях и начальных классах школ, Изд. 2-ое, переработанное и дополненное. М.: Институт Общегуманитарных Исследований, 2004
3. Забрамная С.Д. Практический материал для проведения психолого-педагогического обследования детей: пособие для психол. - мед. -пед. комис. - М.: Гуманитар, изд. центр ВЛАДОС, 2005. – 32 с.
4. Забрамная С.Д., Боровик О.В., Методические рекомендации к пособию «Практический материал для проведения психолого-педагогического обследования детей»: пособие для психолого-медико-педагогических комиссий/. – Москва : Владос, 2008. – 32 с.
5. Забрамная С.Д., Левченко И.Ю., Психолого-педагогическая диагностика нарушений развития (курс лекций). М.: В. Секачѳв, 2007.- 128 с.
6. Забрамная С.Д., Психолого-педагогического диагностика умственного развития детей: Учеб. для студентов дефектол. фак. педвузов и ун-тов. — 2-е изд., перераб. — М.: Просвещение: Владос, 1995.— 112 с
7. Забрамная, О.В. Боровик, Практический материал для проведения психолого-педагогического обследования детей: Коорекционная педагогика: Москва, Гуманитарный издательский центр ВЛАДОС, 2008г. -115с.
8. Зиганов М. А. Скорочтение. - М.: Эксмо, 2008. - 224 с.
9. Лучинин Алексей Сергеевич, Психодиагностика, Шпаргалки, Издательство: Эксмо, 2008г.-110с.
10. Психологические тесты для диагностики познавательной сферы, Деятельность практического психолога. Практикум: <https://studfiles.net/preview/2065705/page:5/>
11. Рубинштейн С. Я. Экспериментальные методики патопсихологии. – СПб, 1998
12. Тест на восприятие детей 5-5,5 лет. «Эталоны» Л.А. Венгера, <https://sites.google.com/site/logopedonlain/psihologogiceskaa-diagnostika-testy/testy-dla->

detej-ot-5-do-7-let/test-na-vozpriatie-etalony-l-a-vengera

13. Эйдемиллер Э.Г. «Детская психиатрия. Учебник для ВУЗов», Учебник для вузов. СПб.: Питер, 2004. - 1120 с.
14. <https://nsportal.ru/user/109445/page/diagnostika-doshkolnikov>
15. <http://www.vashpsixolog.ru/psychodiagnostic-school-psychologist/61-diagnosis-of-intellectual-development/487-methods-committing-10-words>
16. <http://psy-clinic.info/index.php/testy/83-metodika-piktogramma-oposredovannoe-zapominanie>
17. <http://www.child-psy.ru/tests/276.html>
18. <http://psy-diagnoz.com/intelligence/70-seguin-board.html>
19. <https://forum.armedu.am>
20. <https://www.uchportal.ru/pedagogika/zritelnye-diktanty-po-metodike-fedorenko>
21. <https://granish.org/sayings-and-proverbs/>
22. <https://www.eduneo.ru/obsledovanie-chteniya-u-shkolnikov/>
23. <https://logoped.ru/>
24. <http://5psy.ru/obrazovanie/pedagogicheskoe-nablyudenie-kak-metod-izucheniya-lichnosti-uchaschihsya.html>

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՂԵՑՈՒՅՑ

Ձեռնարկ